




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

323

Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՍԵՐԻԱ № 16

Պոլեմարենի բոլոր լեզուների, միացե՛լ:

ՍԵՄՅՈՆՈՎ-ՊՈԳՈՐԵԼՍԿԻՅ

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ

10-ԱՄՅԱԿԻՆ

ՅԱՐԳՄ. Ա. ԱԲԱՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

1924

10/3/2017

Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՍԵՐԻԱ № 16

Պրոլետարենի բոլոր լեզուները, միացե՛ք:


327.2

ՍԵՄՅՈՆՈՎ-ՊՈԳՈՐԵԼ ՍԿԻՅ

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ

10-ԱՄՅԱԿԻՆ

ԹԱՐԳՄ. Ա. ԱԹԱՅԱՆ



ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՄՆԱՄՅԱԿԻՆ

Կապիտալիստական, մյուսներից ավելի կոլտուրական
յերկրների 2 խմբերի մեջ 1914 թվականին բորբոքված, 4 տա-
րուց ավելի տեղադրված և մարդկությանը մոտ 35 միլիոն մարդ
(սպանված և վիրավորված) հստակ պատերազմը մի սնանկալ
չեղ և ծագեց այն բոլորովին վոչ այն բանի համար, վոր Սա-
րայեում մի սերը պատանի-նայիտնալիստ սպանել եր ավ-
տորիական թագաժառանգին և նրա կնոջը:

Պատմության մեջ հասնված այդ աղետը, վոր ընդգրկեց
ամբողջ աշխարհը, կապիտալիզմի որինավոր զավակն եր, այն
միջնադարերի բնական հետեանքը, վորոնք յերկար ժամանակ
հասունանում էին կապիտալիստական հասարակության մեջ և
վորոնք անխուսափելիորեն պիտի բերեին հասցնեին պատե-
րազմի պատմություն-տրեսաների միջև՝ յերկիրը բաժանելու
հողի վրա: Քանի զեռ հնարավոր էին կապիտալիստական վե-
ճերն ու յերկպառակությունները լուծելու «խաղաղ» ուղիները,
պատմությունները խուսափում էին համաշխարհային պատերազ-
մից: Նրանք առանց ցերեմոնիայի իրանց մեջ բաժանում էին
տիեզերքը, հոշոտում էին կենդանի որդանիղմները—ժողովուրդ-
ներին, հաստատում էին ամեն տեսակ «ազդեցության շրջան-
ներ», մեծ պատմություններից մեկին տալիս էին Չինաստանը,
մյուսին—Ճապոնիան, մեկին նվիրում էին Տաճկաստանը, մյու-
սին աֆրիկական հողերը կամ Հնդկաստանը, մեկին ալաքան քա-
րածուի կամ նավթ, մյուսին այնքան յերկաթ կամ թուջ, մի
խոսքով ամեն ինչ բաժանում էին «յեղրայրարար»:

Բայց վերջապես կապիտալիզմն այնպիսի չափերի հասավ,
հասավ այն աստիճանի, յերբ հասունացած միջնադարերը լուծելու
խաղաղ միջոցներն անհնարին դարձան և յերբ պատմության՝
համաշխարհային կապիտալիզմին հայտարարած «պատերազմ
կամ մահ» վերջնագրի պատասխանը միմիայն պատերազմը կա-
րող եր լինել: Կապիտալիզմը բնականաբար այդ պատերազմի
սրտից բռնեց, և ժողովուրդների մեծ կոտորածն սկսվեց:



Սակայն հարկավոր եր պատերազմին մասնակցել տալ ժողովրդական մասսաներին, վորոնք իրավունք չունեին իմանալու այդ պատերազմի իրական պատճառներն ու նպատակները, և կապիտալիստները միացած բանվոր դասակարգի այն առաջնորդներին հետ, վորոնք վաճառվել էին իրանց վրա, պատերազմն սրբոցին սրբազան ազատարար պատերազմի, հանուն ինչ-վոր վոտնահարված իդեալների պատերազմի հանդերձանքով:

Բայց աշխատավոր մասսաները, վորոնք սկզբում յենթարկվել էին պատերազմի պատճառ յեղողներին անուշ տաղերին, շուտով զգացին խաբեյությունը, զգացին այդ անվերջ պատերազմի ծանրությունը, անբնականոնությունը, սարսափը—և սկսեցին պահանջել, վոր վերջ տրվի նրան...

Կրակի մթնոլորտից դուրս գալու և անմիտ յեղբայրասպան պատերազմի դաշտից հեռանալու առաջին հանդեպներն Ռուսաստանի աշխատավոր մասսաներն էին:

Ռուսաստանին հետևեց գերմանական բանվոր դասակարգը: Սակայն նրա թափը զժախտաբար ավելի թույլ դուրս յեկավ, և Հոհենցոլլերների հարստությունը տապալելով՝ նա չկարողացավ իր ձեռքն առնել իշխանությունը: Շնորհիվ առաջնորդների յերկրորդ դավաճանության (առաջինը վերաբերում է պատերազմի սկզբին)՝ նրան հաջողվեց կատարել գործի միայն կեսը, անցնել միայն կես-ճանապարհը:

Պատերազմին մասնակցող մյուս յերկրներում, «հալթող» յերկրներում նույնպես ամեն բան կարգուկանոնին ու հանգիստ չեր: Աշխատավոր մասսաները, բանվորներն ու գյուղացիները, նրանք, վորոնց արյունը վռուցել է ամբողջ յերկրագունդը ծայրեծայր, հրամայողական կերպով պատասխան են պահանջում—թե ինչի համար էին թափում իրանց արյունը, և ամեն կերպ աշխատում են մոտեցնել հատուցման ժամը, վորպեսզի վոչնչացնեն այն հասարակակարգը, վորում հնարավոր են յեղել և դեռ ելի հնարավոր են իմպերիալիստական պատերազմները, վորոնք տասնյակ միլիոնավոր կյանքեր են տանում և հսկայական գանձեր են վոչնչացնում: Այդ ժամը հեռու չէ:

„ԱՁՆԻՎ“ ԱՌԻԹ

1914 թվականի հունիսի 28-ին Հերցեգովինայի մայրաքաղաք Սարայևոյում *) 8-րդ դաստրանցի գիմնազիստ Պրինցիպը բրաունինգի յերկու հարվածով սպանեց ավստրիական դահա-

*) Սարայևոյ Բոսնիայի մայրաքաղաքն էր: Թ.:

ժառանգ երց-հերցոգ Ֆրանց-Ֆերդինանդին և նրա կնոջը—դքսուհի Ֆրին-Հոհենբերգին: 19-ամյա պատանի Պրինցիպը հարցաքննության ժամանակ հայտարարեց, վոր նա գոհ է իր արածից, և վոր նա սպանել է երց-հերցոգին վորպես ավստրիական իմպերիալիզմի մարմնացումի, վորպես ավստրիական մեծ իդեալի ներկայացուցչի, վորպես սերբ ազգի վոխերիմ թշնամու և նեղիչի:

Ամբողջ մի ամսվա ընթացքում բանակցություններ էին տեղի ունենում ավստրիական և սերբիական կառավարությունների միջև, վորոնք սակայն վոչ մի յեղքի չհանգեցին: Ավստրիական կառավարությունը կտրականապես մերժեց ամեն մի կոմպրոմիս՝ պահանջելով, վոր Սերբիան կատարելապես իրան հպատակվի:

Հուլիսի 25-ին Ավստրո-Հունգարիան խզեց դիպլոմատիական հարաբերությունները Սերբիայի հետ, և ավստրիական դեսպանը հեռացավ Բեղգրադից: Դրանից 4 ուր հետո Ավստրիան պատերազմ հայտարարեց Սերբիային և այդպիսով ժողովուրդների յեղբայրասպան մեծ սպանդանոցի հիմքը դրավ: Ավստրիայի հետևից պատերազմի մեջ մտան Գերմանիան և Ռուսաստանը, իսկ նրանց հետևից էլ բոլոր մյուսները—Ֆրանսիան, Բելգիան, Անգլիան, Տաճկաստանը, Ամերիկայի Միացյալ Նահանգները և ուրիշ յերկրներ:

Սարայևոյի սպանությունից ավելի ցանկալի առիթ չեր կարող լինել նրանց համար, վորոնք պատերազմ էին ուղղում, վորոնք սիստեմատիկ կերպով պատրաստում էին այդ պատերազմը:

Ապացուցելու համար, վոր Սարայևոյի դեպքերն իրականապես վոչ այլ ինչ էին, յեթե վոչ առիթ և պատրվակ պատերազմ սկսելու համար, վորին պատրաստվում էին և վորն ուղղում էին, բերենք յերկու հայտարարություն, վոր այդ առիթով արել էին՝ մի կողմից գերման ամենահայտնի իմպերիալիստ Բորբախը, իսկ մյուս կողմից գերման սոցիալ-դեմոկրատ կուսակցության առաջնորդ Հաագեն:

Բորբախը գրում էր. «Մենք պետք է բախտավորություն համարենք, վոր երց-հերցոգ Ֆրանց-Ֆերդինանդի սպանության շնորհիվ հակադերմանական մեծ դավադրությունը յերևան յեկավ յենթադրած ժամկետից ավելի շուտ: Յերկու տարի հետո պատերազմը մեզ համար շատ ավելի ծանր կլինի»:

Իսկ Հաագեն Միջազգային Սոցիալիստական Բյուրոյի պատվիրակների պատվին հունիսի 30-ին Բրյուսելում կազմա-

կերպած հսկայական միտինգում Գերմանիայի դաշնակից Ավստրիայի քաղաքականութիւնը բնույթազօնեց հետեւյալ ձևով.

«Ավստրիան, — ասաց նա, — 25 տարվա ընթացքում սխառմատիկ կերպով աշխատել և խեղդել Սերբիային տնտեսապես: Վերջնապիւր կատարյալ պրովոկացիա չի, վորի նպատակն և ինչպես եւ վոր լինի արծարծել վաղուց ցանկալի պատերազմը: Սերբիայի պատասխանը խմբագրված եր այնպիսի չափավոր տոնով, վոր յեթե Ավստրիան ճշմարտապես ղեկավարվելիս լինել խաղաղասիրական նպատակներով, խաղաղութիւնն ապահովված կլինէր: Ավստրիան պատերազմ եր ուզում... Սոսկալին այն և, վոր այդ խելագարային վոճիրն սպառնում և արյունով հեղեղել ամբողջ Յեվրոպան»:

«Հակադերմանական մեծ դավադրութիւնը», վորի մասին դրում եր Բորբախը, վորպես նաչե Հապելի ասածը, թե «Ավստրիան պատերազմ եր ուզում», — իրապես միջնեւն ըստն էն, մի փայտի յերկու ծայրերն էն դրանք, մի մեղալի յերկու յերեսները: Հետագայում կաշխատենք այդ ապացուցել:

ԻՆՉ Ե ԻՄՊԵՐԻԱԼԻՉՄԱՆ

1914 թվականի պատերազմը հենց սկզբից անվանել էն իմպերիալիստական պատերազմ: Այդ անունով էն կնքել այն վոչ միայն սոցիալիստներն ու հեղափոխականները, այլևս նույնիսկ բուրժուական աշխարհի քիչ թե շատ «առաջավոր» ներկայացուցիչները: Ճիշտ և, պատերազմին մասնակցողներից յուրաքանչյուրն աշխատել և ապացուցել, վոր իր հակառակորդն և իմպերիալիստ և վոչ թե ինքը, սակայն ի վերջո դրանից վոչինչ չի փոխվել: Ամենքն այդ պատերազմը համարել էն իմպերիալիստական՝ խիստ տարբերելով նախորդ բոլոր պատերազմներից:

Բայց ինչ և իմպերիալիզմը:

Յեթե մենք «իմպերիալիզմ» բառը բացահայտելու համար մինչև ներկա դարի սկիզբը վորձեյինք զիմելու այն աղբյուրին, վորտեղից ձևք էն բերվում ընդհանրապես այս կամ այն «խորիմաստ» բառերի ու հասկացողութիւնների վորոշումները — հանրապետական բառարանին, այդ զեպքում մեր բոլոր աշխատանքները կատարելապես զուր կլինէին: Անցյալ ամբողջ դարի ընթացքում և նույնիսկ ներկայի սկզբում հրատարակված վոչ մի հանրագիտական բառարանում «իմպերիալիզմ» բառը չի յեղել: Դա նոր խոսք և, վոր յերևան և յեկել 20-րդ դարի սկզբին,

բայց վորը միանգամից ստացել և քաղաքացիական իրավունք և համաշխարհային հռչակ:

Համառոտակի կանգ առնենք իմպերիալիզմի այն բացատրութիւն վրա, վոր տալիս էն — Ֆրանսիացի գիտնական Երնեստ Սեյերն իր՝ «Իմպերիալիզմի փիլիսոփայութիւնը» քառահատոր յերկասիրութիւն մեջ, գերման սոցիալ-դեմոկրատներ կառուսկին և Հիլֆերդինգը (վերջինս իր խիստ արժեքավոր «Ֆինանսական կապիտալ» գրքում) և վերջապես ընկ. Լենինն իր՝ «Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն ետապ» փառահեղ աշխատութիւն մեջ:

ԲՈՒՐժՈՒԱԿԱՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՐՑԸ ՊՂՏՈՐՈՒՄ ԵՆ

Սեյերի բացատրութիւնն իսկույն և յեթ ապշեցնում և իր ճապաղութիւնը, բացատրութիւն բռնադրոսիկութիւնը: Սեյերի տեսակետով՝ «Իմպերիալիզմը նույնքան հին և, վորքան որդանական կյանքը, վորքան առաջին բջջի ծագումը, և այդ տերմինը նշանակում և վոչ այլ ինչ, յեթե վոչ ամեն մի կենդանի եյակի ձգտում սնվելու, զարգանալու, մեծանալու իրան շրջապատող միջավայրի հաշվին»: Իմպերիալիզմը, ինչպես Սեյերն և բացատրում, — մարդկային բնութիւն հիմնական տենդենցն և, վոր մղում և վորպես անհատներին, այնպես եւ սոցիալական խմբավորումներին ստեղծելու իրանց բարորութիւնը, ներկայումս և ապագայում կյանքի բոլոր բարեքներից ոգտվելու կարելիութիւն՝ իրանց հզորութիւնն ուժեղացնելու միջոցով, իրանց ուժն իրանց շրջապատող միջավայրի հաշվին մեծացնելու միջոցով:

Այս ուսմունքի աշակերտներն ու հետևողներն ավելի հեռու գնացին: Նրանք իմպերիալիզմ էյին վորոշում վոչ միայն մարդկային հասարակութիւն մեջ, այլևս կենդանիների և բույսերի աշխարհում: Եզուարդ Բոդի կարծիքով՝ իմպերիալիստներ էն հանդիսանում վորյեւ անտառի ծառերը, վորոնք իրանց շվաքով խափանում էն ավելի համեստ բույսերի աճումը. նույնպես և՛ նրա կարծիքով՝ իմպերիալիզմը յերևան և գալիս մրջնատոցի մի բանակի գործողութիւնների մեջ, բանակի, վոր կռվի յե դուրս գալիս մի ուրիշ բանակի դեմ: Նա իմպերիալիզմի արտահայտումն և տեսնում կատուներին հալածող շների մեջ, առնետներ վորոտող կատուների մեջ ևայլն:

Ի՞նչ բացատրւոյուն են զվել իմպերիալիզմին մարքսիստները — պատմական մասերիալիստները:

Կարլ Կառլսսոն, մարքսիզմի յերեկելի տեսաբաններից մեկը (մի բան, վորը սակայն չխանգարեց նրան հետազոտութեան համարակարգի անմիջական պաշտպան դառնալու), մի շարք հոգեմեծներում ու բրոյլներում իմպերիալիզմի ելութունը բնորոշել և վորպէս ամեն մի արտադրողական կապիտալիստական ազգի ձգտում իրան յենթարկելու և իր հետ միացնելու ագրարային (հողագործային) բնույթ ունեցող վորքան կարելի յե մեծ շրջան՝ ինչ ազգութիւնների յե վոր պատկանելիս լինի այդ ագրարային շրջանի բնակչութիւնը: Կառլսսոն այդ վորոշումն անկասկած ուղիղ ե, յեթե ի նկատի ունենանք այն հանգամանքը, վոր մեծ պետութիւնների իմպերիալիստական առաջին արտահայտութիւններն արտահայտվել են զլիսավորապէս ագրարային կուլտուրայեան հետամնաց յերկրները հափշտակելում: Անհրաժեշտ և հիշել, վոր իմպերիալիզմ բառը գործածութեան մեջ ե մտել միմիայն 1899—1901 թվականների Անգլո-Բոերական պատերազմից սկսած:

Իսկ դրանից հետո Կառլսսոն բնորոշումն այնքան ել ճշգրիտ չի դուրս գալիս, իսկ վոր զլիսավորն ե, լրիվ չե: Այդ բնորոշումը մոտենում եր գաղութային տիրապետութիւնների շրջանին, յերբ կապիտալիստներն զարգացած պետութիւնները մի վայրենի կատաղութեամբ սկսեցին իրար առաջ կարել հետամնաց ժողովուրդների հարստահարման և նրանց հողամասերի հափշտակման գործում: Բայց գաղութային հափշտակութիւնների շրջանն արագ մոտենում եր իր վախճանին: Բավական եր գաղութային անընդհատ թալանի մեկ-յերկու տասնամյակ, վոր ամբողջ յերկրագունդը բաժանվեր տոյսպէս կոչվող մեծ պետութիւնների միջև՝ նրանց կապիտալիստական հնարավորութիւնների և ուղղամտութեան ուժերի համեմատական չափով: 20-րդ դարի սկզբին «ազատ» հողեր այլևս չկային արդեն:

Անա մի թեյի փոքր, բայց խիստ ազդու ցուցակ, վորը ցույց ե տալիս, թե ինչպէս և ում մեջ եր բաժանված յերկրագունդը 20-րդ դարի սկզբին.

Տարածութիւնը (անգլիական մղոններով)

	Բուն յերկիրը	Գաղութները	Գաղութները բուն յերկրից բանի անգամ են մեծ
Անգլիա	121.633	11.307.415	94,2
Բելգիա	11.343	909.654	80,2
Հոլլանդիա	12.648	736.400	58,2
Ֆրանսիա	207.054	4.986.543	24,4
Պորտուգալիա	35.490	820.952	23,2
Սպանիա	110.550	591.230	5,3
Գերմանիա	208.780	1.028.820	4,9

Հիլֆերդինգը (նույնպէս գերման սոցիալ-դեմոկրատիայի տեսաբաններից մեկը, վոր վերջին տարիներս Կառլսսոն հետ միասին խայտառակ դեր ե խաղացել) իմպերիալիզմի ելութեան բնորոշման մեջ շատ նոր մոմենտներ մտցրեց: Ուսումնասիրելով հատկապէս ֆինանսական կապիտալը և նրա դերը մեր զարաշրջանի առաջավոր արդյունաբերական յերկրների արտադրութեան մեջ՝ Հիլֆերդինգը նկատեց հսկայական կապիտալներ ունեցող ժամանակակից բանկերի ամենարնորոշ կողմը:

ԲԱՆԿԵՐԸ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ ԵՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջներում բանկիրների դերը կայանալիս և յեղել զլիսավորապէս վաշխառութեան մեջ, շատ կամ քիչ տոկոսով դրամ փութ տալու մեջ: Այդ գործառնութիւններից բանկիրները բավական վաստակելիս են յեղել, բայց ընդհանուր առմամբ նրանց ֆունկցիաները սահմանափակ են յեղել: Սակայն բանկային դործի աստիճանաբար զարգանալուց և դրամական աճադին միջոցներ կուտակվելուց բանկիրներն սկսեցին չբավականանալ միմիայն վարկային գործառնութիւններով, թեկուզ հենց ամենամեծ տոկոսներով ել լինելին դրանք: Նրանք սկսեցին նոր ֆունկցիաներ վորոնել, սկսեցին ձգտել ընդարձակելու իրանց գործունեւութեան ասպարեզը: Յեւ մենք տեսնում ենք, թե ինչպէս բանկային կապիտալն սկսում ե աստիճանաբար թափանցել արդյունաբերութեան բոլոր կարեւորագույն ճյուղերի մեջ, թեկ ու թիկունք և հանդիսանում ուժեղներին, միջնույն ժամանակ սպանելով թուլերին, նպաստում ե արդյունաբերութեան կեն-

տրոնացմանը տրեստներում և սինդիկատներում, ստեղծում է կապակցված (комбинированный) ձեռնարկություններ, իսկ ամբողջական առմամբ խոշորագույն դեր է խաղում ամբողջ ազգային տնտեսությունից մի հսկայական ձեռնարկություն ստեղծելու գործում, վորի գլուխն են կանգնում ամենախոշորագույն բանկերը: Այսպիսով՝ ֆինանսական կապիտալը դառնում է արդյունաբերական, իսկ ապա և՛ քաղաքական կյանքի հզորագույն ֆակտորներից մեկը:

Ցույց տալու համար, թե ինչ արագությամբ էլին աճում բանկային կապիտալները և ինչպես եր տեղի ունենում նրանց կենտրոնացման պրոցեսը, բերենք ը. Լենինի՝ «Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն ետապ» գրքից հետևյալը.

«1907—8 թվականներին Գերմանիայի՝ մի միլիոնից ավելի կապիտալ ունեցող բոլոր բաժնետիրական բանկերի ավանդները կազմում էին 7 միլիարդ մարկ, 1912—13 թվականներին արդեն 9,8 միլիարդ: 5 տարվա ընթացքում ավելացել են 40% -ով, և այդ 2,8 միլիարդ ավելացումից 2,75 միլիարդն ընկնում է այն 57 բանկերին, վորոնք 10 միլիոնից ավելի դրամագլուխ ունեյին: Խոշոր և մանր բանկերի միջև ավանդների բաշխումը հետևյալն էր.

Բոլոր ավանդների վոր տոկոսը.

	Բեռլինի ց խոշոր բանկերում.	Մնացած 48 բանկերում, վորոնք 10 միլիոնից ավելի դրամագլուխ ունեյին.	1—10 միլիոնից գրամագլուխ ունեցող բանկերում.	Մանր (1 միլիոնից պակաս դրամագլուխ ունեցող) բանկերում.
1907—8 թ.թ	47	32,5	16,5	4
1912—13 թ.թ	49	36	12	3

Այս ցուցակը մեզ ցույց է տալիս, թե ինչպես 1907—8 թ. թ. բոլոր ավանդների 80% իրանց ձեռքում ունեցող 57 բանկերը 5 տարուց հետո արդեն 85% ունեյին: Ինչ զարմանալու բան կա, վոր այդպիսի հսկաները չզոհանալով սոսկ բանկային «մերկ» գործառնություններով՝ սկսեցին իրանց շոշափուկներով նախ բռնել իրանց յերկրի արդյունագործությունը, ապա նայե արտադրության ամբողջ ճյուղեր ինտերնացիոնալ (միջազգային) մասշտաբով:

Լոկ բառեր ասած չլինելու և իմպերիալիզմի հարցով ասեն մի հետաքրքիրվողի ասպացուցելու համար, թե ինչպես դեհա-

թանների մի փոքրիկ քանակություն (Գերմանիայում, որինակ, նրանց թիվն ընդամենն 9 է) իրանց ձեռքն էլին դավթել ամբողջ յերկրներ, բերենք հետևյալ թվանշաններն այն կապիտալի չափերի վերաբերյալ, վոր արտասանանում յերեք գլխավոր յերկրներ ավանդ են դրել.

Արտասանանում՝ քանկերում՝ դրված կապիտալը
(միլիարդ ֆրանկներով)

Թվականներ	Անգլիա	Ֆրանսիա	Գերմանիա
1862	3,6	—	—
1872	15	10(1869 թ.)	—
1882	22	15(1880 թ.)	—
1893	42	20(1890 թ.)	—
1902	65	27—37	12,5
1914	75—100	60	44

Թե ինչ նպատակներով էլին կապիտալիստներն իրանց կապիտալներն արտասանան տանում—դժվար չէ գուշակել: «Այդ գումարից ստացված հասույթը, յեթե վերցնելու լինենք 5%-ի համեստ չափով, —ասում է ընկ. Լենինը,—պետք է վոր հասներ տարեկան 8—10 միլիարդ ֆրանկի: Դա իմպերիալիստական հարստահարության և աշխարհիս ազգությունների և յերկրների մեծամասնության շահագործման, մի բուռ ամենահարուստ պետությունների կապիտալիստական պարագլուխի վորջ հիմունք է»:

ԻՆՁ Ե ԱՍՈՒՄ ԸՆԿ. ԼԵՆԻՆԸ

Իր՝ «Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն ետապ» գրքում, վոր գրված է 1916 թվականին և տպագրված ցարական գրաքննության պալմաններում, բայց և այնպես ընկ. Լենինը տալիս է զարմանալի վառ և կատարյալ պատկերն այն բանի, թե իրանից ինչ է ներկայացնում իմպերիալիզմ կոչվող կապիտալիզմը:

«Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն ետապ» գիրքը բաժանված է տասն առանձին գլուխների, վորոնցից յուրաքանչյուրն առանձին բնույթագծում է իմպերիալիզմի այս

կամ այն կողմը: Վերջիններս որինակի համար առաջին գլուխն արտադրութեան կենտրոնացման և մոնոպոլիայի մասին: Այստեղ կենինը մարքսիստական քննադատութեան հատու դանակով բանում և կողմերից մեկը, վորը նրա նախորդներին համար համարյա աննկատելի յե անցել, չնայած վոր դա հանդիսանում և վորպես՝ այսպես ասած՝ իմպերիալիզմի հոգին:

«Յեթե անհրաժեշտ լինէր Տալ իմպերիալիզմի վորքան կարելի յե համառոտ բնորոշումը, — ասում և կենինը, — պե՞տք կլինէր ասել, վոր իմպերիալիզմն արագորոքյան մոնոպոլիաստիկան շարժանք և»: Դա ի՞նչ և նշանակում: Կենինը հենց այդտեղ էլ պարզաբանում և իր մակածութեանը (Формулировка) և ամեն ինչ հասկանալի յե դառնում:

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԻՑ ԴԵՊԻ ՄՈՆՈՊՈԼԻԱ

Կապիտալիզմի առանձնահատուկ դիժն անցյալում յեղել և ազատ մրցումը: Գոյութեան են ունեցել բազմաթիվ առանձին ձեռնարկութեաններ, գործարաններ, արհեստանոցներ, փոքր փոխադարձաբար մրցել են իրար հետ: Յուրաքանչյուր մրցող կողմի նվիրական յերազանքն և յեղել վոչնչացնել հակառակորդին, զրաժիկ սպառման ավելի ընդարձակ շուկա, մեծացնել իր կլիենտուրան: Նպատակին հասնելու համար ամեն մի կապիտալիստ աշխատել և բարելավել իր արտադրութեան վորակը, արժանացնել նրա գինը և այսպիսով «մորթել» իր մրցակցին: Այսպիսով՝ տեսնում ենք, վոր ազատ մրցումն առաջնորդելիս և յեղել զեպի հառաջադիմութեան, արտադրութեան միջոցների կատարելագործութեան, զեպի նոր գլուտեր կային: Այդպիսի կարգերում անխուսափելիորեն պետք և վոր առաջ գար բնական ընտրութեան, և ավելի կատարելագործված մեքենաներ և արտադրութեան միջոցներ ունեցողը հաղթել ավելի հետամնացներին: Յե՛վ կատարվում էր այն, ինչ վոր պետք և կատարվելու մրցման ծանրութեան տակ ընկնում էին ավելի թույլերը, տիրապետութեանն անցնում էր ուժեղների, մրցութեանը զիմացողների, ապրանքի վորակը լավացնել և նրա գինն արժանացնել կարողների ձեռքը: Անցնում և մի փոքր ժամանակ ևս, և արտադրութեանն սկսում և կենտրոնանալ: Կապիտալիստների խմբերն սկսում են միանալ, կենտրոնացնում են իրանց ուժերը: Կենտրոնացման պրոցեսը՝ վորպես կապիտալիզմի զարգացման և արտադրական ուժերի աճման բնական հետևանք՝ էլ ավելի

սաստիկ զարգացած մրցումով և առաջ գնում, բայց արդեն վո՛չ առանձին ձեռնարկութեանների մրցումով, այլ միացած խմբերի: Յե՛վ մենք նորից ենք տեսնում նույն պատկերը — հաղթում են ավելի ուժեղները, նրանց և անցնում հեղեմոնիան, նրանք են դառնում շուկայի տերերը, հսկայական կապիտալներ վաստակում:

Թե ինչ արագութեամբ և զարգանում կենտրոնացման պրոցեսը, վոր հետագայում մոնոպոլիայի հասցրեց, կարելի յե տեսնել Գերմանիայի որինակից, վոր բավական ուշ էր մտել կապիտալիստական զարգացման ուղին, և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների որինակից:

1882 թվականին Գերմանիայում յուրաքանչյուր հազար արդյունաբերական ձեռնարկութեաններից յերեքը խոշոր էր (50 բանվորից ավելի ունեցող): 13 տարուց հետո (1895 թվականին) այդ թիվը կրկնապատկվում և, իսկ 1907 թվականին հասնում և 9-ի: Բայց ահա մի ավելի ապշեցուցիչ որինակ, վոր վերաբերում և հենց նույն ժամանակաշրջանին: Գերմանիայում կա 3.265.623 ձեռնարկութեան: Խոշոր ձեռնարկութեաններն ընդամենը 30.588 են, մեկ տոկոսից էլ պակաս (0, 9 %): Ըստ յերեույթին խոշոր ձեռնարկութեանների այդ աննշան թվի դերը յերկրի կյանքում պետք և վոր բոլորովին չնչին լինելու: Բայց արի տես, վոր այդպիսի բան չկա! Բանից դուրս և գալիս, վոր ձեռնարկութեանների այդ 0,9 տոկոսն ունի 5,7 միլիոն բանվոր (յերկրի բոլոր բանվորների 39,5 %), շուրջ և ձիու ուժերի 75 %-ը (6,6 միլիոնը 8,8 միլիոնից) և ամբողջ երեքարեական ուժի 80 %-ը:

Միլիոնավոր մանրիկ ցրված ձեռնարկութեաններն այդ հսկաների ֆոնում ի՞նչ դեր կարող եյին խաղալ: Պարզ և — վո՛չ մի: Նրանց վիճակը կանխորոշված էր: Ղեկավարները նրանց ուտում էին կայծակի արագութեամբ:

Ամերիկայում կենտրոնացման աճումն ավելի ուժգին և: 3.000 խոշոր ձեռնարկութեաններ նույնքան բանվորներ են բանացնում և նույնքան ապրանք են պատրաստում, վորքան բոլոր մնացած ձեռնարկութեանները միասին վերցրած: Իսկ այդ մնացածները քիչ չեն. — 300.000: Իսկ հետո ինչ և լինում: Կենտրոնացման աճումն ավելանում և, մանր ձեռնարկութեանները կամ բոլորովին անհետանում են, կամ շարունակում են մի անկյունում ժամումս գալ՝ վո՛չ մի վտանգ չհերկայացնելով սակայն աճած հսկաների համար: Հսկաների միջև փոխադարձ մրցումն արդեն շահ չի բերում: Ավելի նպատակահարմար և դառնում խոսք կապել իրար մեջ: Ի վերջո առաջ և գալիս էլ ավելի հրեշավոր կենտրոնացում, ճիշտ և, միանգամայն ուրույն բնույթ-

թով: Հազարավոր խոշոր ձեռնարկություններ միանալով դառնում են հարյուրավոր, ապա տասնյակ տրեստներ, սինդիկատներ և կարտելներ:

Այսպես որինակ՝ Գերմանիայում գոյություն ունեցող՝ աշտման կրուպլի պապ Ադոլֆ կրուպլի մի ժամանակ փոքրիկ գործնոցից, վոր ձուլվել եր ուրիշ գործնոցների հետ, առաջացավ կրուպլի աշխարհահռչակ մետաղագործական և թնդանութային գործարանը, վորը հետագայում միացավ ուրիշ պողպատածուլական գործարանների հետ և կազմեց այն հզոր մետաղագործական տրեստը, վոր այնպիսի հսկայական դեր խաղաց 1914 թվականի պատերազմում:

Արտագրության կենտրոնացումը բնականաբար պետք և հասցենք մոնոպոլիայի, վորի մասին Վլադիմիր Իլյինը խոսում և վորպես իմպերիալիզմի ամենագլխավոր հատկանշանի մասին: Իսկ դա հենց այդպես ել և: Քանի վոր արցումը հետզհետե՝ վոչնչանում և, հասնում չգոյության, ել ինչու չպետք և իրար մեջ խոսք կապեն արդյունաբերության միանման ճյուղի մի քանի մալնատներ և մենաշնորհ չդարձնեն այն, նրա միակ տերը չդառնան և այդպիսով աղատվեն փոխադարձ մրցումից, վոր յերբեմն ստատիկ թանգ և նստում: Նորից կրկնվում և հին պատմությունը. ըմբոստներին, յենթարկվել չցանկացողներին վոչնչացնում են՝ վոչ մի միջոցից չխորշելով: Այսպիսով են մենաշնորհացվել արդյունաբերության ամենագլխավոր ճյուղերը մի շարք բարձր գորգացման հասած կապիտալիստական յերկրներում, ինչպես որինակ Անգլիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Գերմանիայում և այլն: Վորպեսզի լուսարանի այժմեթողները, վորին դիմում եյին մոնոպոլիստներն իրանց հակառակ գործելու լուրջ փորձ անողների վերաբերմամբ, Վլադիմիր Իլյինը վկայություն և բերում գերման եկոնոմիստ Կեյստներից, վորը մի հատուկ գրքույկ և նվիրել «Կարտելների և կոոփնակների միջև տեղի ունեցող կովին», այն կոոփնակի ձեռնարկուների, վորոնք չեն մտնում կարտելի մեջ: Ահա այն միջոցներիցանկը, վորոնց գիմում եյին մոնոպոլիստների կապակցությունները (СОЮЗЫ).

1) Անհնազանդներին նրանք զրկում եյին հում նյութերից. 2) պայմանագրեր եյին կնքում բանվորական կապակցությունների հետ այն մասին, վոր վերջիններս աշխատեն միայն կարտելայնացած ձեռնարկություններում. 3) զրկում եյին բերվող մթերքներից. 4) զրկում եյին ապրանքը վաճառելու հնարավորությունից. 5) պայմանագրեր եյին կնքում գնորդների հետ,

վոր նրանք առարական հարաբերություններ ունենան բացառապես կարտելների (մոնոպոլիստների) հետ. 6) նպատակահարմարորեն գներն իջեցնում եյին, վորպեսզի քայքայեն այն ձեռնարկությունները, վորոնք իրանց չեն հպատակվում. 7) նրանց զրկում եյին վարկից և 8) ընդհանրապես բոյկոտի եյին յենթարկում նրանց:

«Մեր առաջ,—ասում և ընկ. Լենինը,—արդեն ման ու խոռո, սեխիֆապես հեհամնաց յեվ սեխիֆապես առաջավոր ձեռնարկությունների մրցապայքար չե արդեն: Մեզ անհեղ հեհում եհե, վոր մոնոպոլիստները խեղցում եհ նրանց, ովքեր չեն յենթարկվում մոնոպոլիային, նրա հարստահարմանը, նրա փահառույթին»:

Հասկանալի չե, վոր մոնոպոլիան միանգամից ջնջեց աղպային սահմանները՝ դառնալով խոշորագույն միջաղպային ֆակտոր: Յերևան յեկան արդյունաբերության զանազան ճյուղերի մենաշնորհային ինտերնացիոնալներ, վորոնք իրապես առաջ բերին 14 թվականի պատերազմը:

ՈՎ Ե ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԸ

Լենինն իմպերիալիզմի յերկրորդ հիմնական հատկանիշն և համարում «բանկային կապիտալի միաձուլումն արդյունաբերականի հետ և այդ ֆինանսական կապիտալի խառնի վրա «ֆինանսական ռիզարիիս» ստեղծելը»: Բանկերի դերի մասին արդեն խոսել ենք Հիլֆերդինգի իմպերիալիստական թեորիայի մասին հիշելիս: Հենց այն ժամանակ ել Լենինի բերած՝ գերմանական բանկերի որինակով ցույց տվինք, թե ինչպես եր առաջանում կապիտալի կենտրոնացումը, ինչպես եյին բանկերը շարունակ ընդարձակում իրանց ֆունկցիաները, ինչպես սկսեցին ղերքեր գրավել յերկրի արդյունաբերական կյանքում՝ հետագայում արդյունաբերությունը ղեկավարող մարմին դառնալով: Ֆինանսական կապիտալի կենտրոնացման գորմանալի պրոցեսի որինակներով Իլյինը ցույց և տվել, թե ինչպես իրապես մի փոքրիկ բուռ մարդիկ—բանկիրներ ու արդյունագործներ—կառավարում և յերկրներ, ստեղծում և քցում և կառավարություններ, առաջացնում և պատերազմներ, մեծագույն ավերածություններ և կատարում, սովի և մահվան և դատապարտում տասնյակ միլլիոնավոր մարդկանց, նման գործերից հսկայական ոգուտներ քաղելով: Ամենքի համար պարզվում և, վոր վոչ թե Վիլհելմ

11-ը՝ և նրա միևնույններն ելին կառավարում Գերմանիան, այլ Գերմանական Բանկը. վոչ թե Պուանկարեն ու Կլեմանսոն ելին կառավարում Ֆրանսիան, այլ «Լիոնյան Կրեդիտը»: Բայց այդ դրուժյունը զաղված եր հարյուր միլլիոնավոր մարդկանցից: Միլլիոնավոր աշխատավորներ իրապես չգիտեին, թե ում են ծառայում իրանք, ում են զոհարերում իրանց արյունը, իրանց կյանքը: Գործակատար-արքաների և լավեյ-միևնույնների հետեւ կանգնած ելին իսկական տերերը, յերկրի և ժողովուրդների իսկական իշխողները—Կրուպյաները, Ստիննեսները, Մորգանները, Ռոկֆելլերները, Ռոտշիլդները և այլք ընդ նոսին: Պահանջվում եր, վոր մարդկութունը միմի մեծագույն թշվառությունների անդունդը, պահանջվում եր 1914 թվականի պատերազմը, վորպեսզի աշխատավոր մասսաներն իսկապես հասկանան, թե ում են ծառայում և ովքեր են հանդիսանում իրանց իսկական տերերը:

Լենինին իմպերիալիզմի յերրորդ հատկանշանն և համարում— «Կապիտալը յերկրից դուրս օգնելը՝ ապրանքը դուրս օգնելուց օտարերելով»:

Հասկանալի չե, վոր այս ճշմարտությունը չընդունել չի կարելի: Արդյունաբերության այս կամ այն ճյուղի մոնոպոլիան միջազգային մասշտաբով բնականաբար չեւ կարող յուր գնալ առանց ֆինանսական կապիտալի ամենագործոն մասնակցության այդ բանում: Վերը մենք արդեն տեղ տվինք մի շատ բնորոշ տախտակի, վոր փայլուն կերպով լուսաբանում և այդ դրությունը (տես № 3 տախտակը): Հիմա մենք այն կհաստատենք կրկին մի շատ հետաքրքիր տախտակով, վորը պետք և հասկանալի լինի առանձնապես յուրաքանչյուր ուսւ բանվորի և գյուղացու:

Մենք ամենքս շատ լավ գիտենք, թե ինչու չե միջազգային բուրժուազիան այնպես առում խորհրդային Ռուսաստանին և մի ժամանակ այնպես սպառնալից էր նրա դեմ: Դա վոչ միայն նրա համար և, վոր մենք գահավիժել ենք Նիկոլային և ստեղծել խորհրդային կառավարություն: Համաշխարհային բուրժուազիայի ատելությունը մեր դեմ գլխավորապես բացատրվում և այն բանով, վոր մենք ի չիք ենք դարձրել ցարական պարտքերը և ազգայնացրել ենք արդյունագործությունը, վորի նշանավոր մասը պատկանելիս և յեղել ոտար կապիտալիստներին: Բայց ինչպես դուրս յեկավ, վոր ուսական արդյունաբերության առյուծի բաժինը պատկանելիս և յեղել ոտար կապիտալիստներին: Պատասխանը պարզ և հասարակ է: Արդյունաբերության ամե-

նաղլիսավոր ճյուղերը միջազգային մասշտաբով մոնոպոլիզացիայի յենթարկելու նպատակով կապիտալիստները զանազան խարդախ միջոցներով զանազան յերկրներում, հաճախ յերկրագնդի զանազան ծայրերում գնում ելին այն, ինչ վոր իրանց պետք է, իրեն «ընկերակիցներ» մտնում ելին զանազան տրեստների, սինդիկատների և կարտելների մեջ կայն կայն: Իսկ ալդ բոլորն անում ելին կապիտալը դուրս օգնելու միջոցով: Ամենքս գիտենք, վոր մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանն ոտար կապիտալի գաղութ և յեղել, գլխավորապես՝ Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի և Բելգիայի:

2.000.000.000 ՌՏԱՐՅԵՐԿՐՅԱ ՎՈՍԿԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՃ

Ընկ. Պավլովիչ-Վելյաման իմպերիալիզմի մասին իր մի գրքի մեջ մատնանշում և Պ. Վ. Ուլի «Ոտարյերկրյա կապիտալներն Ռուսաստանում» աշխատությունը, վորը թվանշաններով հաստատում և այդ դրությունը: Բանից դուրս և գալիս, վոր Հոկտեմբերյան հեղափոխության մոմենտին ուսական ձեռնարկություններում զրված ոտարյերկրյա կապիտալը հավասար և յեղել 2.032.8 միլլիոն վոսկի ուրբու (բացի այն ձեռնարկություններից, վորոնք յեղել են ՌՍՖՖՀ-ից անջատված մասերում, որինակ՝ Լեհաստանում, Լատվիայում, Եստոնիայում): Ինչպես տեսնում ենք, այդ գումարը բավական խոշոր է: Սկսում ես զլելի ընկնել, թե ինչու իսկապես ոտարյերկրյա կապիտալիստներն այնպիսի համառությամբ ձգտում են ստանալ ուսական ձեռնարկություններում մուծած կապիտալները:

Անկասկած շատ հետաքրքիր բան և հանդիսանում այդ դումարի բաշխումը զատ-զատ պետությունների մեջ: Դա մեզ կողմի հասկանալու, թե ինչու այդպես առանձնապես ջանանում և այս կա այն կապիտալիստական յերկիրն իր միլլիարդներն ստանալու գործում:

Ֆրանսիա	.	.	.	648,1	միլլիոն ուրբլի
Անգլիա	.	.	.	500,6	» »
Գերմանիա	.	.	.	317,5	» »
Բելգիա	.	.	.	311,8	» »
Հյուս. Ամերիկ	.	.	.	117,7	» »
Հոլլանդիա	.	.	.	36,5	» »
Չվեցերիա	.	.	.	31,7	» »

Շվեդիա	16,6	միլլիոն ուտրլի
Դանեմարք	14,5	» »
Ավստրո-Հունգարիա	5,9	» »
Նորվեգիա	2,3	» »
Իտալիա	2,1	» »
Ֆինլանդիա	2	» »

Արդյունաբերական և ֆինանսական կապիտալի ձգտումներն ընդթափանցում են համար ավելորդ չե ընդգծել, թե նախկին Ռուսաստանի արդյունաբերությունից վոր ճյուղերի մեջ և թափանցել գլխավորապես:

Ահա թվեր, վոր վերցրել և ընկ. Պավլովիչն Ուրի Նույն գրքից.

Լեռնարդյունաբերություն	834,3	միլլ. ուտր.
Մեքենայաշինություն	392,7	» »
Ելեքտր. տրամվայներ և քաղաքն.		
Ելեքտրակ. լուսավորութ.	359,4	» »
Բանկեր	192,5	» »
Քիմիական արդյունաբերութ.	83,6	» »
Առևտրական ձեռնարկութ.	80,7	» »

Բանը պարզ և. ոտարյերկրյա կապիտալիստների ամենամեծ ուշադրությունը գրավելիս են յեղել արդյունաբերությունից ամենահատուկաբեր և ամենակարևոր ճյուղերը: Որինակ՝ ֆրանսիական կապիտալին և պատկանելիս յեղել լիակատար իշխանությունը ռուսական արդյունաբերությունից յերկու կարևորագույն ճյուղերում—քարածխային և մետաղագործական: Դժվար չե այս իրողություններից համոզվել, թե ինչպես և յեղել տերություն անելիս ցարական կառավարությունը, յերր գտնվելիս և յեղել իշխանությունից գլխին: Ռուսաստանի ամբողջ արդյունաբերական կյանքի հիմունքները գտնվելիս են յեղել պարիզյան բանկիրների և ֆինանսիստների ձեռքում: Ոտարյերկրյա կապիտալիստները սիրում են յին գավթի նայի յերկաթուղիները: Նույնպես համեզ պատահ և: Մենք ճանաչում ենք մի շարք յերկաթուղիներ, ինչպես որինակ Հյուսիս-Դոնեցի, Վոլգա-Բուգուլմինսկի, Սև-ձովյան, Դոնեցի և ուրիշները, վորոնց մեջ ֆրանսիական կապիտալը մասնակցում եր 50 տոկոսով: Բայց դա դեռ բոլորը չե: Ֆրանսիական կապիտալը կատարյալ տեր ու տնորեն եր նայի ռուսական նավաշինության մեջ, նա ղեկավարում եր Բազիլի խոշորագույն նավթային ձեռնարկությունները ևայլն ևայլն:

ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Այս բոլորը հիանալի կերպով ապացուցում և, թե ինչ ահագին դեր եր խաղում դրանց յերված կապիտալը, ինչպես եր այն իր շոգափուկներով պինդ բռնում ամբողջ յերկրագունդը՝ բաժանելով այն ի վերջո չնչին քանակի արդյունագործներին-մագնատներին մեջ, վորոնք միացել կազմել են յարեւտներ, սինդիկատներ և խոշոր բանկեր: Զուր չե ընկ. Լենինն իմպերիալիզմի մյուս առանձնահատկությունը տեսնում այն բանի մեջ, վոր «կազմակերպվում են կապիտալիստների միջազգային մեծագոհային կապակցություններ, վորոնց իրանց մեջ են բաժանում աշխարհը»: Սկսելով մի յերկրի արդյունաբերությունից այս կամ այն ճյուղի մոնոպոլիայից՝ հանքահորերի, հանքերի, գործարանների և բանկերի տերերն այդ գործն ավելի ու ավելի յեն զարգացնում, կազմակերպելով կապիտալիստների միջազգային միություններ: Այսպես որինակ՝ մենք ճանաչում ենք յերկու խոշոր ելեքտրո-տեխնիքական տրեստ Գերմանականը—«Համադերմանական Երկտրականություն Բնկերություն» և Ամերիկականը—«Հաուստոնի և Եդիսոնի», վորոնք 1907 թվականին պայմանագիր են կնքել աշխարհը բաժանելու վերաբերմամբ: Մենք գիտենք նույնպես պողպատի արդյունագործությունից 400 ներկայացուցիչների գաղտնի համաժողովի մասին, վորոնք 1913 թվականին ժողովվել են Բրյուսսելում յերկաթի և պողպատի սինդիկատ հիմնելու համար: Հայտնի չե նույնպես 1910 թվականին «Յերկաթածողերի Արտագրություն Միջազգային Սինդիկատի» խորհրդաժողովում կնքված պայմանագիրը, վորով Անգլիայի բաժինը յերկաթածողերի համաշխարհային արտածությունից մեջ վորոշվել եր 37% , Գերմանիայինը՝ 20% ևայլն: Դեռ վերջին ժամանակներս նման փորձ արվեց ստեղծելու Ռուրի ավազանի միասնական տրեստ գերմանական յերկաթի և քարածուխի արքա Սաինսեսի և ֆրանսիական կապիտալիստների միջև: Տոկոսների վրա համաձայնություն չգալով՝ նրանք այդ գործն առայժմ թողել են:

Ել հարկ չկա ասելու, վոր միասնական կապիտալիստական տրեստի գանազան մասնակիցների մեջ «աշխարհը բաժանելու» հողի վրա պետք և վոր միջնադեպեր առաջանային և որեցոր սրվեյին: Սկսվեց նոր մրցողական պատերազմը, բայց արդեն ուրիշ բնույթով, քան առաջ: Սկսվեց պայքար ոգտի ավելի մեծ տոկոսի համար, մի տրեստի կամ սինդիկատի մասնակիցների կամ գաղտ-գաղտ գոյություն ունեցող միանման տրեստների միջև կո-

դոպուստի ավելի մեծ մասի համար: Որեցորդ ավելի և ավելի մեծացող ու խորացող այդ միջնադեպերի հողի վրա ի վերջո դուրսացավ մեծ պլանը, վորը բացվեց, բայց չոչնչացավ իմպերիալիստական պատերազմով, այն եւ բացվեց վոչ ամբողջովին:

Այսպիսով պետք է հաստատել, վոր այն բանի ճշգրիտ պատկերը, վորն իրանից ներկայացնում է իմպերիալիզմը, տվել է վոչ այլ վոք, յեթե վոչ ընկ. Լենինը: Նա կանգ չի առել իմպերիալիստական առանձին ուրվագծերի վրա, գտնելով ցավի արմատը՝ ցույց է տվել մեզ իմպերիալիզմի դեմքն իր բոլոր գեղեցկութամբ, առանց ներկի ու շարքի:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՐՁԱՎՈՐ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գերմանական կապիտալիստական դարպացման ուղին յեւ վրոպական մյուս յերկրներից, մանավանդ Անգլիայից շատ ավելի ուշ մտած լինելով, առաջ գնաց այնպիսի հսկայական քայլերով, վոր նրա մրցակիցները—կապիտալիստական մյուս յերկրները կատարելապես պարզ հասկացան, վոր յեթե չաջողվի նրան կանգնեցնել, դանդաղացնել նրա արագ ընթացքը կամ բոլորովին վոչնչացնել, նա վերջ ի վերջո նրանց կկլանի, կգառնա ամենահզոր և թերեւս համայնվրոպական մի պետութուն:

Արժե համեմատության դնել Գերմանիայի արտադրության աճումը (պատերազմի նախորդ 25 տարիներում) մյուս խոշորագույն յերկրների արտադրության աճման հետ, վորպեսզի համոզվենք, վոր յեւրոպական յերկրների վախճան հնչիմն չի յեղիւ Այսպես—

քարածուխ և ստացել (միլլիոն տոնն) —

	1886 թ.	1913 թ.
Անգլիան	160,0	287,1
Ֆրանսիան	19,9	41,3
Հ. Ա. Մ. Նահանգները	103,1	570,2
Գերմանիան	73,7	234,5

թուջ և պատրաստել (հազար տոնն) —

	1887 թ.	1913 թ.
Անգլիան	7.681	10.424
Ֆրանսիան	1.588	5.207
Մ. Նահանգները	6.520	30.986
Գերմանիան	4.024	19.394

պողպատ և պատրաստել (հազար տոնն) —

	1886 թ.	1913 թ.
Անգլիան	2.403	7.786
Ֆրանսիան	428	4.687
Մ. Նահանգները	2.604	31.802
Գերմանիան	954	18.968

Կարող եր արդյոք Անգլիան սառնարտությամբ նայել թե ինչպես Գերմանիան, վոր դեռ նոր-նոր եր «խանձարուքից» դուրս յեկել, սկսում է իր առաջը կտրել, իր—կապիտալիստական սյունի առաջը,—վորի առաջ դողում էյին ամենքն ու ամեն ինչ, Հոսկանալի յե, վոր վոչ: Ահա թե ինչու Անգլիան ուրիշներից վոչ պակաս, այլ ավելի յեր շահագրգռված այն բանում, վոր մի կերպ սանձահարի Գերմանիային, վորը կտրել եր իր առաջը թե թուջի արտադրության, թե պողպատի արտադրության մեջ և համարյա թե հավասարվել եր իրան քարածուխ ստանալու մեջ:

Պարզ եր, վոր Ֆրանսիան եւ չեր կարող հանգիստ քուն ունենալ, քանի վոր իր կողքին շուտ եր գալիս այդ հսկան, վոր կարող եր իրան վոչնչացնել, ջնջել աշխարհի յերեսից:

Հենց Միացյալ Նահանգներն եւ, վորոնք թե քարածուխ ստանալում, թե պողպատի և թուջի արտադրության մեջ ամենքից առաջ էյին գնում, միթե կարող էյին հանգիստ կերպով դիտել Գերմանիայի «յերեսուն մղոնանոց» քայլերը: Հասկանալի յե, վոր վոչ: 2Թ վոր Միացյալ Նահանգների շնածկները փառավորապես գիտեյին, վոր չնայած այն բանին, վոր Միացյալ Նահանգների արդյունաբերութունը յերկու-յերեք անգամ ավելի յե գերմանական արտադրութունից, բայց վերջինս իրանց հաղթում է և համաշխարհային շուկայում հանդիսանում է իրանց առաջին մրցակիցը:

Այստեղ բերվող Միացյալ Նահանգների և Գերմանիայի արտադրին առևտրի 1887—1913 թ.թ. շրջանառության աճումի տախտակը մեզ կասի, թե ինչու Ամերիկան, վոր այնպես «հեռու յեր կենում» Յեվրոպայից, ուրախությամբ գործածեց իր ձեռքը, վորպեսզի ավելի ամրացնի Գերմանիայի վզին պարանի հանգույցը:

Ներմուծում: Արտածում: Ամբողջ շրջանառութ.

(Միլլիոն վոսկի բուրի)

Մ. Նահանգներ	1887 թ.	1.386,6	1.432,2	2.816,8
» »	1913 »	3.621,1	4.931,8	8.557,9
Գերմանիա	1887 »	1.403,1	1.351,5	2.781,5
» »	1913 »	5.323,1	4.121,2	9.443,3

I ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԿԱՆ

Յեզ անա յերբ այս չոր թվանշանները մասին քիչ խորն ես մտածում, իսկույն պարզվում և հասկանալի յե դառնում, թե ինչու Գերմանիան քանդելու գործում Անգլիան, Ֆրանսիան և Միացյալ Նահանգները գործում էյին միասին և վոչ թե զատ-զատ, սկսում ես հասկանալ, թե ինչու կապիտալիստական յերկրները յեվրոպական խմբերն աշգրիտի ձևի վերածվեցին և վաչ ուրիշ։ Առաջ եր յեկել մի մրցակից, ուժեղ և կարող, վորը խոտտանում եր վոչ թե հավասարվել համաշխարհային պետություններին, ալլ շատ կողմերից նրանց սռաջը կտրել, և հարկավոր եր՝ ինչ ել վոր լինի՝ վոչնչացնել նրան։

Իսկ Գերմանիան եւ կատարել կերպով ձգտում եր ինչ եր
վոր լինի անցնել ֆուգած բոլոր յերկրներէց — նույնպէս վոյ
թե քեֆի համար՝ ինչպէս ասում են, այլ բացառապէս
և միմիայն նրա համար, վոր նա ուզում եր համաշխարհային
պետութիւններէ ընդհանուր «կոնցերտում» գրավել վոյ սովո-
բական հաստուն սեղ, այլ ամենահաստուն սեղը, վոյ թե
հենց այնպէս մի համեղ պատառ խել, այլ ստանալ ամենհա-
մեղ պատառ, ամենալավը: Ուստի և Գերմանիան յերազում
եր ջարդել Ֆրանսիային, իր ձեռքն առնել Բելգիան, ճեղքել-
անցնել Արևելք, իր համար ճանապարհ բանալ Բալկաններով և
Տաճկաստանով դեպի Հարավային Ովկիանոսը, այնտեղից եւ
Հնդկաստան, Զինատան հայլն: Ահա թե ինչու յեր
ծնվել Բերլին-Բազդադ յերկաթուղու ծրագիրը, վորի իրագոր-
ծումը Գերմանիային պետք և դարձնել «ամենքից և ամենից
վեր»: Հակադերմանական կապալկցութիւն մեջ Ռուսաստանի
մասնակցութիւն ունենալը բացատրվում և գլխաւորապէս ուս-
տական և գերմանական տնտեսական ու քաղաքական շահերի
բաղխումով վորպէս Բալկաններում, այնպէս եւ Արևմուտքում:
Զե՛ վոր մեզ հայտնի չի, թե ինչ բաղձանքով եր նայում ցարա-
կան Ռուսաստանը Տաճկաստանին, Կոստանդնուպոլսին և Դար-
դանեկին, և այդ մասին ուսու խմբերիալիտոսներն ինչ ծրագիրներ
ունենին:

Այդ բոլոր ծրագիրներին հետևանքն է հանդիսանում ցամաքային և ծովային կատաղի սպառազինումը: Իսկ վերջինս հետևանքն այն էր, վեր ամբողջ Յեվրոպան ուղեգնական բանակի յեր վերածվել: Հարկավոր էր միայն մի փոքրիկ կաճ, փոքրագույնս վերածվի ուղեգնական գործողությունների դաշտի, միլիտանավոր բանակների ամենահսկայական ընդհարման վայրի:

Այն հարցը, թե ինչպե՞ս պետք է վերաբերվին պրոլետարիատը և նրա ավանգարդը — սոցիալիստական կուսակցությունները դեպի պատերազմը, հաճախ և ծառացել իր ամբողջ ընդարձակությամբ ինտերնացիոնալի առաջ: Դեռ իր ծագման սկզբում և ինտերնացիոցալը դեմ առավ այդ հարցին և վորոշ պատասխան տվավ իրան: Ի՞նչ էր այդ պատասխանը: Տեսնենք համաժողովների փորձումները:

1867 թվականի սեպտեմբերի 2-8 Լոդանում կայացած Ին-
տերնացիոնալի 2-րդ համաժողովում կայացած վերջման մեջ
կարգում ենք.

«Պատերազմի ամբողջ ծանրությունն ընկնում է գլխավորապես բանվոր դասակարգի վրա, վոչ միայն զրկելով նրան գոյության միջոցներից, այլևս նրան հարկադրելով թափել իր արյունը... Պատերազմը վոչնչացնելու համար բավական է միայն արձակել բանակը, այլ անհրաժեշտ է նայել փոխել հասարակարգը՝ արտադրության մթերքներն ավելի ու ավելի արդարացի բաշխելու մտքով»:

Ուղիղ մի տարուց հետո, 1868 թվի սեպտեմբերին Բրյուսսելում կայանում ե և ինտերնացիոնալի 3-րդ համաժողովը, վսրը պատերազմի հարցի վերաբերմամբ ել ավելի արմատական վորոշում ե կայացնում: Նրանում վոշ միաջն հաստատվում ե, թե պատերազմն ում համար ե ձեռնտու ե վոր դասակարգն ե առաջ բերում աշն, ալլե պատերազմին հալադելու միջոց ե մատնանշվում:

«Համաժողովը, — ասվում է վորոշման մեջ, — առանձնապես առաջարկում է բանվորներին դադարեցնել ամեն մի աշխատանք այն դեպքում, յերբ իրանց յերկրում պատերազմ է բռնկվում: Համաժողովը լիակատար հույս ունի բոլոր յերկրների բանվորներին համակող համերաշխության վոգու վրա և հուսով և, վոր նրանք չեն զլանալ նպատելու պատերազմի դեմ վարելիք բոլոր ժողովուրդների այդ պատերազմին»:

I. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼՈՒՄ

Քառորդ դար իր գոյությունը պահպանած և իր դրոշակի շուրջը միլիոնավոր բանվորներ կազմակերպված II Ինտերնացիոնալին միճակվեց բացառիկ ուշադրություն դարձնել պատե-

րազմի հարցի վրա և այն բանի վրա, թե ինչ վերաբերմունք պետք է ունենա բանվոր դասակարգը դեպի պատերազմը: Ինտերնացիոնալի վոչ մի համաժողով չէր անցնում առանց այդ հարցը զննելու և ջերմ վիճարանություններ առաջ բերելու:

Նորից դիմենք միջազգային սոցիալիստական համաժողովների վորոշումներին, վորոնք կոգնեն մեզ մի կողմից հասկանալու, թե բանվոր դասակարգը հանձին իր ներկայացուցիչների ինչպես եր վերաբերվում դեպի իմպերիալիզմն ու մատերիալիզմը, իսկ մյուս կողմից—թե ինչպես ամենամոճական լուսկյին, չեբը բանվոր դասակարգն ստիպված յեղավ իրապես հականերգործել համայնլրոպական բռնչված պատերազմին, II Ինտերնացիոնալի առաջնորդները դավաճանեցին աշխատավոր մասսաների շահերին և իրանք տարան աշխատավոր մասսաներին յեղբայրասպան կռվի:

II Ինտերնացիոնալի Առաջին Համաժողովը կայացավ Պարիզում 1889 թվականին:

Պատերազմի հարցին նվիրված վորոշման մեջ մենք կարդում ենք.

«...Մշտական բանակ պահելու համար ռազմական փոխառությունների անընդհատ ծանրության և մեծացող հարկերի շնորհիվ՝ այդ մշտական բանակը հանդիսանում է աղքատության և քայքայման պատճառ... Համաժողովը պահանջում է մշտական բանակները վերացնելու հետ միասին ժողովուրդների ընդհանուր զինաթափություն, և դրա հետ միասին հայտարարում է, վոր պատերազմը վորպես այդպիսին իբրև հետևանք ժամանակակից տնտեսական պայմանների՝ կարող է վերջնականապես չքանալ միմիայն կապիտալիստական կարգի վոչնչանալովը, աշխատանքի ազատագրությամբ և սոցիալիզմի միջազգային հաղթանակով»...

II Համաժողովը, վոր կայացավ 1891 թվականին Բրյուսսելում, այդ հարցի նկատմամբ հայտարարեց հետևյալը.

«... Միմիայն սոցիալիստական հասարակարգի հաստատումը, վորը վոչնչացնում է մարդս մարդուն շահագործելը, վերջ կդնի միլիտարիզմին և վերջնականապես խաղաղություն կհաստատի: Ուստի բոլոր նրանց, ովքեր ցանկանում են վոչնչացնել պատերազմը, պարտականությունն ու շահը պետք է ստիպեն մտնելու միջազգային սոցիալիստական կուսակցության մեջ, վորը հանդիսանում է խաղաղության ճշմարիտ և միակ կուսակցությունը»:

III Համաժողովից (1893 թ. ոգոստոսին Յյուրիխում) մենք՝

իմպերիալիզմի գնահատության հետ միասին՝ լսեցինք նոր, միանգամայն բնորոշ խոսք.

«Այն ժողովներում, վորտեղ քննվում են օրինագծեր, բանվորական կուսակցության ներկայացուցիչները պարտավոր են մերժել ռազմական վարկերը: Նրանք պարտավոր են անդադար բողոքել մշտական բանակների պահելու դեմ և պահանջել զինաթափություն»...

IV Համաժողովի (1896 թ. դեկտեմբերին Լոնդոնում) վորոշման մեջ ուշադրության արժանի յի նրա ներածական մասը, վորում պատերազմների պատճառները բնութագրվում են հետևյալ կերպով.

«Կապիտալիզմի շրջանում՝ պատերազմների պատճառ են հանդիսանում վոչ թե կրոնական կամ ազգային տարաձայնությունները, այլ զանազան պետությունների կառավարող դասակարգերի տնտեսական անտագոնիզմը, վորի մեջ են ընկնում նրանք հենց արտադրության յեղանակի շնորհիվ»...

V Համաժողովի (1900 թ. սեպտեմբերին Պարիզում) վորոշումն իր կոնկրետությամբ գերազանցում է բոլոր նախկինները: Դա սկսում է նրանից, թե՛

«Համաժողովը հայտարարում է, վոր անհրաժեշտ է կրկնապատկել բոլոր յերկրներում եներգիան, համառությունը և ջանքը միլիտարիզմի դեմ վարվող ամենորյա պայքարում և վոր մանավանդ անհրաժեշտ է բուրժուազիայի և իմպերիալիստական կառավարությունների միությանը հակադրել բոլոր յերկրների պրոլետարների միությունը»:

Պատերազմի դեպքում պրոլետարիատին գործի դիմելու միջոցներից, վոր տռաջարկվում է Համաժողովը, բացառիկ ուշադրության են արժանի հետևյալները.

1) Սոցիալիստական զանազան կուսակցությունները պետք է մանրամասն ուշադրություն դարձնեն պատահելության կըրթության և կազմակերպության վրա՝ միլիտարիզմի դեմ պայքարելու նպատակով:

2) Բոլոր յերկրների սոցիալիստապատգամավորները պետք է ձայն տան ամեն տեսակ պատերազմական ծախսերի դեմ և նավատորմի ու գաղութներն ուղարկվող ռազմական եքսպեդիցիաների վրա անվող ամեն մի ծախսի դեմ:

Դրա հետ միաժամանակ Համաժողովը բողոքի վորոշում կայացրեց այսպես կոչվող խաղաղ խորհրդաժողովների դեմ, ինչպիսին Հաագայինն եր, վորոնք կյապես զիմակավորված կեղծիք կլին:

Բանվոր դասակարգի անհաշտ-թշնամական վերաբերմունքը դեպի միլիտարիզմը, իմպերիալիզմը և իմպերիալիստական պատերազմներն առանձնապես վառ կերպով և արտահայտված VII Միջազգային Սոցիալիստական համաժողովի վորոշման մեջ, վորպիսի համաժողովը կայացավ 1907 թ. ոգոստոսին Շտուտգարտում:

Ահա մի քանի քաղվածքներ այդ համագումարի վորոշումից.

«Կապիտալիստական պետությունների միջև մղվող պատերազմները հանդիսանում են իրեն ընդհանրապես համաշխարհային շուկայում նրանց ունեցած մրցությունների հետևանք, վորովհետև յուրաքանչյուր պետություն ձգտում է վոչ միայն ապահովելու իր համար վորյեկ շուկա, այլև ձեռք բերելու նոր շուկաներ՝ առանձնապես ուրիշ ժողովուրդ հարստահարելու և նրա յերկրամասը հախշտակելու միջոցով... Պատերազմները խրախուսվում են ազգայնական նախապաշարունակներով, վորոնք սխտեմատիք կերպով պատվաստվում են տիրող դասակարգերի շահերի համար, վորպեսզի պրոլետարիատի ուշադրությունը կասեցնեն իր դասակարգային պարտականություններին և միջազգային համաբաշխության իր պարտականությունին...»

... Համաժողովը հայտարարում է. յեթև պատերազմ բորբոքվելու սպառնալիք կա, այն ժամանակ բոլոր շահագրգռված յերկրներում բանվոր դասակարգի պարտականությունն է և պարլամենտներում նրա ներկարացուցիչների պարտքը Միջազգային Բյուրոյի ոգնությամբ յեռանդուն և համաձայնեցված գործողությունների միջոցով ամեն հնարավոր ջանք գործ դնել խանգարելու պատերազմն ամեն մի յեղանակով, ինչ յեղանակով վոր ավելի հարմար կհամարեն և վորոնք, հասկանալի յե, կարող են տարբեր լինել, նայած դասակարգային պայքարի սրվածության և ընդհանուր քաղաքական զրության աստիճանին:

Իսկ յեթև պատերազմն արդեն ծագել է՝ չնայած այս բոլոր միջոցներին, այդ դեպքում նրանք պարտավոր են ամեն մի ճիգ գործ դնելու, վորպեսզի վորքան կարելի յե շուտով դադարեցնեն այն, և բոլոր ուժերով ոգտագործելու պատերազմից առաջացած տնտեսական և քաղաքական ճգնաժամը, վորպեսզի ցնցեն ավելի խորն ընկած հասարակական շերտերը և արագացնեն կապիտալիստական տերապետության անկումը:

1910 թ. սեպտեմբերին Կոպենհագենում կայացավ Ինտերնացիոնալի VIII Համաժողովը: Համաշխարհային աղետի մերձեցումն զգում ու գիտակցում էյին ամենքը: Զանազան յերկրների միջև հարաճուն ինպերիալիզմի հողի վրա տեղի ունեցած նախորդ

ընդհարումները (որինակ՝ ուս-ճապոնական պատերազմը և օրիշները) և սպառազինվելու կատաղի առաջկտուրը—շեկացում էյին միջնորդաբ ծայր աստիճանի: Ողը հագեցած եր բռնկվող նյութերով և հեղձուցիչ գաղերով: Հարկավոր եր միայն նշանավոր «ստատուս-քվո»-ի (հավասարակշռության) մի փոքրիկ խախտում, վորպեսզի պատերազմը բորբոքվի: Ինտերնացիոնալի համար ամբողջական առմամբ, վորպես նայե նրա բոլոր ազգային սեկցիաների համար ափաշքարա պարզ եր, վոր Յեվրոպան հրաբլի վրա յե, վոր հենց հիմա այդ հրաբուղին անսելի լավա կվիժի, մինչև այդ չտեսնված լավա, վոր կողողի ամբողջ աշխարհը:

Համաժողովի վորոշումները հաստատում են ամբողջովին և լրիվ նախորդ համագումարների բոլոր վորոշումներն իմպերիալիզմի հարցի մասին և Ինտերնացիոնալը մոտեղ բոլոր անդամների վրա պարտք են դնում կո լե բոլոր ուժերով իմպերիալիզմի և պատերազմի հնարավորության դեմ:

1912 թ. Բալկաններում բռնկվեց թուրք-բուլղարական պատերազմը: Դա 1914 թվականի պատերազմի «փոքրիկ ներածությունն» եր: Վորովհետև Ինտերնացիոնալի հերթական Համաժողովը հետաձգված եր 1914 թվականը, ուստի Միջազգային Սոցիալիստական Բյուրոն վորոշեց Արտակարգ Համաժողով գումարել Զվիցերիայում՝ նրա քննությանը ներկայացնելով միայն մի հարց. «Միջազգային զրությունը և պատերազմի դեմ գործելու համար միացումն»:

1912 թ. նոյեմբերի 25-ին Բազելում գումարվեց այդ առևակարգ Համաժողովը: Նրա անունից հայտարարվեց միաձայն ընդունված մի մանիֆեստ, վոր պատերազմին եր նվիրված: Ի տարբերություն միջազգային նախորդ Համաժողովներում կայացած վորոշումների, ուր Ինտերնացիոնալի վերաբերմունքը դեպի պատերազմը ձևակերպվում եր ընդհանուր խոսքեղով, Բազելի մանիֆեստն աչքի յե ընկնում իր կոնկրետությամբ: Յեվրոպայի քաղաքական կացությունն ընդհանուր վերլուծումի յենթարկելուց հետո՝ մանիֆեստում վորոշվում է յուրաքանչյուր սոցիալիստական կուսակցության հատուկ անելիքներն առանձին առանձին: Մանավանդ նշանավոր է մանիֆեստի հետևյալ տեղը, վոր անհրաժեշտ ենք համարում բերել ամբողջովին.

«Թող կառավարությունները լավ իմանան, վոր Յեվրոպայի այժմյան կացության և բանվոր դասակարգի միջավայրում ուղեղների այժմյան տրամադրության ժամանակ պատերազմ ծագելն անվտանգ է լինել հենց իրանց համար: Թող նրանք հիշեն, վոր

Ֆրանս-գերմանական պատերազմն առաջ և բերել կոմմունայի բռնկումը, վոր ոռւս-ճապոնական պատերազմն արթնացրել և ոռւս ժողովրդի հեղափոխական ուժերի շարժումը: Թող նրանք չմոռանան այն բանը, վոր ռազմական և ծովային սպառազինման վրա կատարվող հրեշտային ծախսերի մեջ պետութիւնների փոխադարձ մրցութեան առաջ բերած դժվարութիւնները պատճառ չեղան այն բանին, վոր Անգլիայում և ցամաքում սոցիալական միջնադեպերն սկսեցին չտեսնված չափերով բարդանալ գործադուլներով: Նրանք անխելք են, յեթե չեն հասկանում, վոր լոկ ահռելի պատերազմի միտքը բոլոր յերկրների պրոլետարների մեջ բարկութեան և ցասմունքի զգացում և առաջ բերում: Բանվորները վոճիր են համարում իրար կոտորելը կապիտալիստների շահի համար, արքայական տների փառասիրութեան կամ գաղտնի համաձայնութիւնների խորամանկահյուսութիւնների համար: Յեթե կառավարութիւնները կանոնավոր հեղափոխութեան ամեն մի կարելիութիւն խեղդելով՝ ամբողջ Յեվրոպայի պրոլետարիատին հարկադրում են հուսահատական վերոշումներ կայացնել, հենց այդ կառավարութիւնների վրա էլ ընկնելու յե իրանց առաջ բերած ճգնաժամի ամբողջ պատասխանատվութիւնը»:

Այդ մանիֆեստում նույնպես բացված էր ոռւսական ցարիզմի ամբողջ հանցավոր քաղաքականութիւնն իր պատերազմական արկածախնդրութիւններով աշխարհիս բոլոր ծայրերում, մանավանդ Արեւելքում:

«Ցարիզմը Յեվրոպայի բոլոր ռեակցիոն կառավարութիւններին պատվարն է, — հայտարարում է Ինտերնացիոնալը, — և ոռւս ժողովրդի ամենահաւոր թշնամին է: Նրա կործանումն իր գլխավոր անելիքներից մեկն է համարում Ինտերնացիոնալը»:

II Ինտերնացիոնալի Բագելյան Համաժողովն Ինտերնացիոնալի վերջին համաժողովն էր, նրա կարապի յերգը:

Հերթական համաժողովը, վոր նշանակված էր 1914 թվականին, չկայացավ: Պատերազմը, վորը նախատեսել էին, և վորի համար յեռանդով պատրաստվում էր համաշխարհային բուրժուազիան, դարձավ իրողութիւն: Յեվ այդտեղ կատարվեց ամենասարսափելին և զրա հետ միասին ամենախայտառակը: Յերբ հարկավոր էր իրական դարձնել միջանի տասնյակ տարիների ընթացքում կայացրած վերոշումները, յերբ պահանջվում էր խոսքը դրժ գարձնել, — II Ինտերնացիոնալը անանկացավ Մոսկաւով իր վճռները և բազմաբովանդակ խոստումները: II Ինտերնացիոնալի առաջնորդները փոխանակ բանվորներին ի-

րանց իմպերիալիստական կառավարութիւնների դեմ ապստամբութեան կոչ անելու, փոխանակ իսկապես բոլոր միջոցները ձեռք առնելու պատերազմն արգելելու համար, զիմեցին կապիտալի յերկրպագութեան, դարձան նրա ամենահավատարիմ ծառաները: Դեռ յերեկ միասնական Ինտերնացիոնալի առաջնորդներն այժմ բաժանվեցին թշնամի բանակների և բանվոր դասակարգը կովի դուրս բերին կապիտալիստների շահի համար, իմպերիալիզմի հաղթանակի համար: Ինտերնացիոնալի զանազան սեկցիաների անդամները պատերազմական ճակատներում իրար հանդիպեցին իրբե թշնամիներ և անխնա սպանում էին իրար: Բայց դրան մենք դեռ քիչ հետո կվերադառնանք:

ԻՆՉՊԵՍ ԵՐ ՍՊԱՌԱԶԻՆՎՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԸ

Ինտերնացիոնալի և նրա առանձին ազգային սեկցիաների բոլոր վերոշումներում առանձնապես վառ կերպով և ընդգծվել միշտ կապիտալիստական յերկրների հարածուն սպառազինման մոմենտը և կառավարութիւնների կատարի ձգտումն իրարից գերազանցելու այդ բանում, իրար առաջ կտրելու:

Յույց տալու համար, թե ինչ էր սպառազինումների իսկական պատկերը մինչև 1914 թվի պատերազմի սկիզբն իսկ, մենք կրեւենք հետեյալ խրատական թվանշանները.

Անգլիայում 1875 թվին պատերազմական ծախսերը (ցամաքային և ծովային զորքի) կազմում էին պետական բոլոր ծախսերի 38,6% -ը (մի յերրորդից միքիչ ավելի): Անցկացավ յերեք տասնյակ տարի, և 1907 թվականին Անգլիայի ռազմական ծախսերը բարձրացան 48,6% -ի, այսինքն հավասարվեցին պետական բոլոր ծախսերի համարյա կիսին: Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում, այդ ըստ յերեւութին ամենից «խաղաղասեր» յերկրում 1908 թ. ռազմական ծախսերը կազմում էին պետական բոլոր ծախսերի 56,9% -ը: Բոլոր ծախսերի շատ կեսը գնում էր սպառազինման, նավատորմի վրա, գաղութային զանազան եքսպեդիցիաների կամ, պարզ ասելով, ամեն տեսակ թալանչիական արշավանքների վրա: Բայց ահա ամենից խոշոր պետութիւնների ցամաքազորի և նավատորմի ծախսերի մի վերքիկ տախտակ, վորը կոչնի մեզ հասկանալու կապիտալիզմի իսկական եյութիւնը նրա վերջին շրջանում.

	միլիոն ռուբլիներով	
	1890 թ.	1903 թ.
Ռուսաստան	210	470
Ֆրանսիա	300	415
Գերմանիա	180	405
Ավստրո-Հունգարիա	100	200
Իտալիա	75	120
Անգլիա	150	280
Ճապոնիա	7	90
Միացյալ Նահանգներ	100	200

Պատերազմից առաջ սպառազինման ծախսերն ավելի շատացան: Ֆրանսիան 1910 թ. ռազմական կարիքների վրա ծախսել է 502 միլիոն ռուբլի, իսկ 1914 թ. 740 միլիոն: Գերմանիան 1914 թ. ռազմական կարիքների վրա ծախսել է 943 միլիոն ռուբլի, իսկ 8 տարի դրանից առաջ—1907 թվականին—ավելի քան յերկու անգամ պակաս—418 միլիոն: Անգլիան, չնայած իր «խաղաղասիրտությանը», աշխատում էր սպառազինման գործում ևս, ինչպես նաև շատ բաներում, ուրիշներից հետ չմնալ, այլ առաջ անցնել: 1910 թվականին Անգլիայի ռազմական ծախսերը հավասար են յեղել 694 միլիոն ռուբլու, իսկ 1914 թ. 800 միլիոնից ավելի: Բայց այս անսակեռից առանձին հետաքրքրություն է ներկայացնում ամեն կողմից հետաքննվող ցարական Ռուսաստանը, վոր իրան թույլ էր տալիս ճոխություն անել իմպերիալիստական պատերազմին պատրաստվելու «ազնվագույն» գործում, հետ չմնալ մյուս մեծ, իսկ գլխավորապես «կուլտուրական» յերկրներից: Ահա ամենապարզ ուղինակ.

1892 թ. Ռուսաստանի ռազմական ծախսերը հավասար են յեղել 293 միլիոն ռուբլու, 1902-ին՝ 421 միլիոնի, 1906-ին 529 միլիոնի, իսկ 1914-ին ռազմա-ծովային միլիտարություն նախահաշիվը հասել է 957 միլիոն վոսկի ռուբլու: Այս գումարը կլորացնելով՝ ստանում ենք ընդամենը մի միլիարդ վոսկի ռուբլի...

Բերած րոլոր թվանշաններից առանձնապես բնորոշ է վերջին տարվա թվանշանը, յերբ Ռուսաստանն անցել է բոլոր յերկրներից: Նույնիսկ վերջին նախապատերազմյան տարում վոչ մի յերկիր այդպիսի հսկայական գումար չի ծախսել (Գերմանիան—943 միլիոն, Անգլիան—804, Ֆրանսիան—740):

Ահա յերկու պերճախոս ուղինակ ևս, վորոնք կողմեն մեզ ավելի պարզ, իսկ վոր գլխավորն է, ավելի դյուրությամբ ըմբռնելու կապիտալիստական յերկրների իմպերիալիստական հյուս-

թյունը և ստանալու այն բանի վառ պատկերը, թե ինչպես է յին իսկապես կառավարում, իսկ ամբողջ աշխարհում՝ բացառությամբ Խորհրդային Միության՝ շարունակում են մինչև այժմ ևլ կառավարել իրանց քեֆն ուզածին պես իմպերիալիստական պետությունները:

Ցարական Ռուսաստանում՝ յուրաքանչյուր հարյուր ռուբլուց զնում եր

բանակի, նավատորմի, փոխառությունները	
վճարելու վրա	40 ռ. 14 կ.
ժողովրդական լուսավորության (կրթության)	
վրա	3 » 86 »
հողաշինարարության վրա	4 » 06 »
կառավարչության, գատարանների, դիպլոմատիայի, ճանապարհների հաղորդակցության, առևտրի և արդյունաբերության, ֆինանսների վարչության վրա և այլն	51 » 94 »
	100 ռ. —

Իսկ Անգլիայում, «անսասան» դեմոկրատիայի այդ յերկրում, ուր պարտադիր զինվորական ծառայությունը մուծվել է միայն 14 թվականի պատերազմի ժամանակ, ժողովրդական սեփական դրամների ամեն մի հարյուր ռուբլին բաշխվելիս է յեղել ևլ ավելի «ազնիվ» կերպով:

Ահա ապացույցներ. ծախսվելիս է յեղել	
բանակի և նավատորմի վրա	53 ռ. 80 կ.
պետական պարտքերը և փոխառությունների	
0/10 0/10-ը վճարելու վրա	22 » 50 »
քաղաքացիական հաստատությունների վրա	23 » 70 »
	100 ռ.

Ահա իմպերիալիզմի իսկական դեմքը: Բավական է խորանալ այդ թվանշանների մեջ, վորպեսզի հասկանանք, թե ինչու բանվոր դասակարգը, ինչու ամբողջ աշխատավոր ժարդկությունը ձգտում է, վորպեսզի իշխանությունն այլևս չմնա այն մարդկանց ձեռքում, վորոնք ժողովրդական փողի 1/10-ը մսխում են պատերազմների և կողոպուտների վրա և դեռ ստիպելով «մի բան» ևլ ավել իտալ բնատուրքով—միլիոնավոր ֆանկ կյանքերի ձեռով:

II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ 14 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՈՐԵԿԻՆ ՅԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

1914 թվականի պատերազմն Խնտերնացիոնալի համար անակնկալ չէր: Համաժողովների վորոշումների բնույթից, վորպէս նաեւ Խնտերնացիոնալի առանձին սեկցիաների վճիռներից հեշտ և հասկանալ, վոր բանվոր զասակարգի առաջնորդները հիանալի կերպով գլխի էյին ընկնում միջազգային քաղաքական ամբողջ մեքանիկան: Այսպիսով ամեն մի յենթադրություն այն մասին, թե 1924 թվականի դեպքերը կարող էյին անակնկալ թվալ և ուստի հանկարծակիի բերին Խնտերնացիոնալի առաջնորդներին—պետք է վճռականապէս և վերջնականապէս ժխտվի: Կրկնում ենք, Խնտերնացիոնալն ամբողջական առմամբ և առանձին սեկցիաների առաջնորդները մասնավորապէս փառափորապէս գիտեյին, թե ինչ են անում իմպերիալիստական կառավարությունների ռազմական միջադրություններում, ինչպիսի գիվային ծրագիրներ են մշակվում այնտեղ և յերբ են մոտավորապէս սկսելու կիրառել այդ ծրագիրները: Յեվ ահա այդպիսի պայմաններում կատարվեց Սարալեոյի սպանությունը, այդ «ադնիվ» առիթը 1914 թվականի պատերազմի համար: Խնտերնացիոնալի համար հասավ վճռական րոպեն: Նրան հարկավոր եր առանց մի րոպե կորցնելու ասելու իր կարուկ խտրք և իր ամբողջ ուժը, իր ամբողջ հեղինակությունը գնելու պատերազմի կամ խաղաղության կշեռքի նժարի վրա:

ԲԱՅՑ ԻՆՉ ԱՐԱՎ II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ:

Սարալեոյի սպանությունից մինչև պատերազմի իրական սկիզբը մի ամբողջ ամիս ժամանակամիջոց կար: Ուշադրությամբ հետեւեք, թե II Խնտերնացիոնալի առաջնորդներն ինչի վրա դործադրեցին այդ համեմատաբար մեծ ժամանակամիջոցը և ինչպէս իրադրոճեցին իրանց բաղմամբով խոստումները և հանդիսավոր յերդումները—վոչ մի դեպքում թույլ չտալ, վոր պատերազմ լինի:

Խնտերնացիոնալի գործադիր մարմինը մի համաժողովից մինչև մյուսը համարվում եր Միջազգային Սոցիալիստական Բյուրոն, վոր ընտրվում եր Համաժողովներում: Ըստ յերևութին հենց վոր բացվեցին համաշխարհային վտանգի առաջին նշանները, այդ Բյուրոն պետք է գումարվեր, քններ ստեղծված դրությունը և կոնկրետ միջոցներ մշակեր: Բայց իրապէս այդպիսի բան չկալ: Միջազգային Սոց. Բյուրոյի նիստը տեղի ունե-

յալ Սարալեոյի սպանությունից ուղիղ մի ամիս հետո, այն որը, յերբ Այստրիան Սերբիային պատերազմ հայտարարեց (հուլիսի 29-ին): Այդ իրողությունից կարելի չէ դատել, թե Խնտերնացիոնալի Բյուրոն ինչպէս «չերմ և անհամբերությամբ» եր վերաբերվում իրապէս սկսված պատերազմի հարցին, քանի վոր նա կարողացալ մի ամբողջ ամսով ընթացքում մինչև հրադիսի ժայթքումը ձեռները ծալած նստել: Հուլիսի 29-ին Բյուրոն գումարվեց Բրյուսսելում: Գերման ներկայացուցիչների առաջարկով միաձայն վճռվեց Խնտերնացիոնալի Միջազգային Համաժողով գումարել վոչ թե ողոստոսի 29-ին, ինչպէս առաջ եր վորոշված, այլ 9-ին, միյնուշն ժամանակ վորոշեցին Վիեննայի փոխարեն Համաժողովը գումարել Պարիզում: Թե նիստում և թե այդ նույն որը Բրյուսսելում պատերազմի դեմ կազմակերպած միջազգային փառահեղ միտինգում արքհեղափոխական ճառերի պակասություն չեր զգացվում սակայն: Այդ կողմից դեռ ամեն բան կարգին եր, և կարելի չեր յենթադրել, վոր Խնտերնացիոնալը դեռ մի ինչ-վոր վճռական բան կանի պատերազմը խափանելու համար:

Հաադեն (Գերմանիա)՝ որինակ՝ հայտարարեց:

«Թող մեր թշնամիներն զգուշանան: Կարող ե պատահել, վոր կարեքալոր և հարստահարված աղքատ դասակարգերը վերջապէս զարթնեն և սոցիալիստական հասարակություն հաստատեն»:

Իսկ Ժորեսը, Ֆրանսիացի այդ մեծ արիւրունը, վորը մինչև իր կյանքի վերջին րոպեն (նա հենց այդ նիստի հետեյալ որն սպանվեց) չեր դադարում հավատալ, վոր պատերազմ չի լինի, վոր կառավարությունները խելքի կզան, վոր կհաղթանակի մարդասիրության և ազնվության զգացումը,—ասաց:

«Պետք է թույլ չտալ, վոր պատերազմի ուրվականն ամեն վեց ամիսը մեկ դուրս գա իր գերեզմանից և սոսկում տարածի ամբողջ աշխարհում»:

Պետրոգրադում տեղի ունեցած (14 թ. հուլիսին) խոշոր գործադուլների մասին լուրը և այն, վոր Ֆրանսիական հանրապետության նախագահ Պուանկարեն Ռուսաստան այցելած ժամանակ Պետրոգրադի բանվորները պատերազմի դեմ բողոքի հրակայական ցույցեր են արել, Խնտերնացիոնալն առանձին խանդավառությամբ ընդունեց:

Իրոք դրանով ել վերջացալ Խնտերնացիոնալի ղեկավար մարմին Միջազգային Սոցիալիստ. Բյուրոյի գործունեյությունը:

Ողոստոսի 9-ին նշանակված՝ Խնտերնացիոնալի Համաժողովին չվիճակվեց այլևս գումարվել: Այդ միքանի որում Խնտերնացիոնալի առաջնորդները կարողացան մեծ «հեղափոխություն»

կատարել—նրանք հլու հնազանդ, վիզները ճկած քարշ ընկան իմպերիալիզմի կառքի հետևից, և աշխատավոր դասակարգի շահերի ու պրոլետարիատի միջազգային համերաշխությունից զեմ վոչ մի վոճիր չմնաց, վոր նրանք չգործեցին: Ինտերնացիոնալը կորավ. նա մեռավ անարգ մահով:

«Բայց ի՞նչ արավ Ինտերնացիոնալը» հարցի մեր պատասխանը սակայն լրիվ չի լինիլ, յեթե մենք սահմանափակենք լոկ վերը բերած իրողություններով Միջազգային Սոցիալիստական Բյուրոյի գործունեությունից: Ինտերնացիոնալի, վորը հեղափոխական ճոռումարանություն տակ թագցնում եր կեղծավորություն, ուղարկումնիզմ և սոցիալ-շովինիզմ, այդ Ինտերնացիոնալի սնանկությունը պարզվում է մանավանդ այն ժամանակ միայն, յերբ մենք հայացք ենք քցում այն բանի վրա, ինչ վոր կատարվում եր այդ որերն Ինտերնացիոնալի առանձին սեկցիաներում ազգային սահմաններում:

ՍԿԱՆԵՑ ՔՐԱՆՍԻԱՅԻԳ: Հուլիսի 14—15-ին Պարիզում տեղի յեր ունենում Ֆրանսիացի սոցիալիստների համաժողովը: Հասկանալի է վոր համաժողովի ուշադրություն կենտրոնը սերբ-սլավոնական միջնադեպն եր և համայնվորակական պատերազմի մոտալուսությունը: Բայց այդ, զեռ համաժողովին անհրաժեշտ ել եր վճռել, թե Ֆրանսիացի պատգամավորներն ինչ վորոշումի պիտի ձայն տային մոտակա միջազգային համաժողովում:

Առաջինը հանդես է գալիս Ֆրանսիական մարքսիզմի ներկայացուցիչներից մեկը—Կոմպեր-Մորելը: Նա իսկույն սկսում է զարգացնել պատերազմների յերկու տեսակի գոյություն թեորիան—պատգամական և հաճախակա, և վոր հետևապես չի կարող մի միակ հայեցակետ լինել պատերազմի մասին ընդհանրապես և սոցիալիստների ունեցած վերաբերմունքի մասին զեպի այն մասնավորապես:

«Իսկ ի՞նչ կանենք մենք, յեթե մեզ վրա հարձակվեն»:

«Իսկ յեթե Ֆրանսիայի վրա գրոհ տան, արդյոք թույլ կտանք ավերել այն՝ ընդհանուր գործադուլ հայտարարելով», —հարցնում է նա՝ պատերազմի զեպքում այսպես կոչվող վճռական միջոցներ գործադրելու կողմնակիցներին:

Կոմպեր-Մորելի շրթունքներով խոսում է յին իրոք բոլոր յերկրների սոցիալ-դավաճանները, վորոնց համար հարձակողական և պաշտպանողական պատերազմների մասին սերած խոսքն ավելի քան ցանկալի յեր:

Կոմպեր-Մորելին լրացրեց Դելինյերը: Նա ել ավելի հա-

մարձակ, այսպես ասած, ցինիզմով ամեն ինչ վորոշակի դարձրեց:

«Յերկու պատերազմող յերկրներում միյնալույն ուժով չի կարելի միաժամանակ ընդհանուր գործադուլ անել: Յեմ վորովհետև յես չեմ կամենում, վոր սոցիալիստական շարժումով ավելի ուժեղ մի յերկիր ջարդվի ավելի հետամնացի ձեռքով, ուստի յես քվե պիտի տամ ըողհանուր գործադուլի դեմ»:

«Ֆրանսիան խաղաղասեր արամադություն ունի,—չարունակում է Դելինյերը:—Յեթե նա պատերազմելու լինի, նշանակում է նրան հարկադրել են: Արդյոք մենք պիտի պաշտպանություն զեմ գնանք, յեթե գրոհ ավել յերկիր սոցիալիստները չկարողանան խանդարել հարձակումը»:

Ինտերնացիոնալի ֆրանսիական սեկցիայի յերեկի անդամներ յայ միքանի ճառերից ելապես արդեն պարզվեց, թե ինչ դիրք են բռնելու Ֆրանսիացի սոցիալիստները, հենց վոր պատերազմը կատարված իրողություն զանա: Այս յեկուններից (выступления) հետո կապիտալիստներն և նրանց կոալաբություններն հարկ չկար վախենալու պրոլետարիատի և նրա առաջնությունից կողմից լուրջ հակաանդործություն հնարավորությունից: Ամեն ինչ պարզված եր:

Մենք սակայն կանց կանենք ելի միքանի ճառերի վրա, վոր արտասանվել են Պարիզի Համաժողովում:

Կոմպեր-Մորելի և Դելինյերի իմաստով խոսող բոլոր հետադիմներն պատասխանել եր ժորեսը: Բնութագրելով իմպերիալիզմի ելությունը և ընդգծելով այն վտանգի ամբողջ լուրջությունը, վոր իմպերիալիզմն է սպառնում աշխարհին, նա մատնանշեց պրոլետարիատի որեցոր աճող ուժը, պրոլետարիատի, վորը նրա կարծիքով ի վիճակի յեր խանդարելու պատերազմը:

«Բայց վորպեսզի միջազգային պրոլետարիատի այդ արտասուրը չափով աճած ուժը կարողանա իրան ցույց տալ, վորպեսզի պատերազմ չցանկացող բանվորական մասսաների կամքը կարողանա միջնադեպի կարելիությունը կասեցնել, անհրաժեշտ են պայքարի նոր մեթոդներ, վորոնք համապատասխանեն կյանքի ժամանակակից պայմաններին: Այդ միջոցն է հանդիսանում ընդհանուր գործադուլը՝ բոլոր պատերազմող յերկրներում միաժամանակ և համաձայնեցրած կերպով կալավերալված... Հարկավոր է, վոր նա (պրոլետարիատը) կանգնեցնի պատերազմը, հարկավոր է, վոր նա իր հզոր բազկով հարվածի միջնադեպերի պատճառ յեղողներին, սպանությունների պատճառ յեղողներին...»

ժողովների ճառի տպավորությունը թուլացնելու համար սկսեցին մեկը մյուսի հետևից յիշել հեղափոխական գործողությունների, հակառակորդները, իմպերիալիստական բուրժուազիայի այդ ամենահավատարիմ ծառաները, վորոնք սկսեցին ապացուցել, թե գործադուլն անհնարին է, թե Ֆրանսիան պատերազմ չի ուղղում, թե միմիայն ծայրածեղ կարեքի դեպքում նա կսկսի պաշտպանվել, թե չի կարելի սոցիալիստներն ուժեղ Գերմանիան ցարական վալդենի դադախները կեր դարձնել հայրն հայրն:

«...Յերբեք, յերբեք, յերբեք ընդհանուր գործադուլը պատերազմի դեպքում չի քվեյարկվելու վոչ մի դիտակից սոցիալիստի կողմից», — հայտարարում է Գեդը:

Այսպիսով պատերազմի հարցում ֆրանսիական սոցիալիստների բռնած դիրքը վորոշ էր: Կասկած չկար, վոր հենց վոր առաջին արաքոցը լավի, կարմիր դրոշակները կիջեցնվեն, և զսասկարգային պայքարի հրավերների փոխարեն Բնտերնացիոնալի առաջնորդները կսկսեն բանվորներին կոչ անել քաղաքացիական խաղաղության, պաշտպանվելու անհրաժեշտությունը, իրագործելու սոցիալիստների սրբազան պարտականությունները — պաշտպանել իր հայրենիքը հայրն: Ճիշտ է, դրան հետևող մինչև պատերազմի սկիզբը յերկու շարթում արմատական մամուլում դեռ գրվում էյին կրակոտ ճառեր խաղաղությունը պահպանելու անհրաժեշտությունը մասին, պրոլետարիատի անկիւնների մասին, ճիշտ է, միտինգներում և ժողովներում արտասանվում էյին ճառեր նույն վոգով, իսկ ժողովանդուկ կերպով մաշում էր զինվորական նախարարության չենքը: Բայց այդ բոլորն անուղուտ բաներ էյին: Սոցիալիզմի և կապիտալիզմի շահերի միջև ընտրությունն արվել էր — ֆրանսիական սոցիալիզմի առաջնորդները կապիտալիզմի կողմն էյին անցել:

ԳԵՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թուուցիկ հայացք քցենք այն բանի վրա, ինչ վոր տեղի էր ունենում Գերմանիայում, մի յերկրում, վորը համարվում էր Բնտերնացիոնալի պատվարը, նրա հիմնական միջուկը: Գերման սոցիալ-դեմոկրատիայի խոսքն այդ ոլերում կարող էր վճռական նշանակություն ունենալ:

Դեպի մոտեցող յիվրոպական պատերազմն ունեցած՝ դերմանական սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքը բնորոշող առաջին

զոհումներները հուլիսի 25-ից են — Դրանք են սոցիալ-դեմոկրատ կուսակցության կենտրոնական որգան «Փորվերտս»-ի առաջնորդող հոգվածը՝ Նավիլամ ավստրիական վերջնագրի հարցին, և կուսակցության բոլոր անդամներին ուղղված կոչը: Յերկու փաստաթղթերի վոճն էլ թունդ հեղափոխական է: Դրանից լավ չեր էլ կարող լինել: Հոգվածում խիստ քննադատվում են Վիեննայի՝ «պատերազմի հրահրողների գործողությունները, գրգռողների, վորոնք չեն ցանկանում հարցը խաղաղությամբ լուծել»:

«Սարայևոյի մահադեպը», — կարդում ենք այդ հոգվածում, — միայն հարմար առիթ էր, բայց իրապես մենք այստեղ տեսնում ենք Ավստրո-Հունգարիայի բուլկանյան իմպերիալիստական քաղաքականությունը, Ավստրո-Հունգարիայի, վորն այնքան պարտություններ է հատ նորից հույս ունի հասնել իր ուղածին»: «Փորվերտսը» խորհուրդ է տալիս գերմանական կառավարությանն ազդել Ավստրիայի վրա և հետ պահել նրան արկածալից դրությունից՝ այս խոսքերով:

«Ավստրիական իշխողների փառասիրությունը կամ փող դեղելու իմպերիալիստական շահերին չարտք և զոհարելի դերմանական զինվորների վոչ մի կաթիլ արյուն», — կարդում ենք այդ կոչում: Իսկ ապա — «հասնել և լուրջ մոմենտը, ավելի լուրջ, քան վերջին տասնամյակներում վորյեկ մեկը: Դանդաղումը վտանգավոր է! Սպառնում է համաշխարհային պատերազմ! Տիրապետող դասակարգերը, վորոնք խաղաղ ժամանակ ճնշում, տրհամարում և շահագործում են ձեզ, այժմ էլ ձեզ կոգտագործեն իրեն թնդանոթային միտ: Ամեն տեղից պետք է իշխողների ականջներին հասնի այս կանչը, «Մենք չենք ցանկանում պատերազմ! Կորչի պատերազմը! Կեցցե՛ ժողովուրդների միջազգային յեղբայրությունը!»:

Հուլիսի 26-ին «Փորվերտս»-ում յերեսց մի նոր հոգված կամ՝ տվելի ճիշտն ասած՝ նոր մուրհակ, տրված այն պայմանով, վոր հենց մի քանի ոլից հետո ուրանա այն, համարի ոլրիշներ: Դա Ավստրիայի՝ Սերբիային պատերազմ հայտարարելու մյուս ոլն էր, յերբ «յիվրոպական համընդհանուր պատերազմը գուռն էր բաղխում»:

«Այս բոլորն ինչի՞ համար է անվում», — հարցնում է «Փորվերտսը»՝ տեսնելով արյունախանձ գողանի — պատերազմի բաց յերախը, և հենց տեղում տեղը պատասխան է տալիս այդ հարցին. «Նրա համար, վոր ավստրիական կառավարությունը, ավստրիական զինվորական կուսակցությունը, — վորն իրանից ներկայացնում է մարդկանց նույնքան չնչին մի խմբակ, ինչ-

քան գերման շովինիստները, — ցանկանում են մի անգամ յետ ծավալել իրանց բռնի հարձակումը»:

Սոցիալ-դեմոկրատիան նշանակեց ամբողջ Բելլինում և Գերմանիայի մյուս արդյունաբերական խոշոր կենտրոններում հուլիսի 27-ին բողոքի մաստայական ցույցեր սարքել պատերազմի դեմ:

Ս.-դեմոկրատիայի՝ բոլոր ժողովներում առաջարկած վարդապետականությունը եր միաձայն: Նրանում, ինչպես և վերը բերած բոլոր ղեկավարներում վորյեն ակնարկելի նշույլ գետ չկա պատրաստվող մեծ դավաճանություն մասին: Դեռ ամեն բան կարգին եր: Ինչ ել վոր լինի՝ խաղաղություն պահանջելու հետ միասին մենք այդ վորոշման մեջ գտնում ենք խիստ նշանակալից և սպառնական ակնարկ այն բանի մասին, թե ինչ կանի Ս.-Դ.-ն, յեթե բանվոր ղեկավարող այնուամենայնիվ զենքի տակ կանչվի: «Պատերազմի գրգռողները պետք և իմանան, վոր... սոցիալ-դեմոկրատիային բանակել մեջ մտցնելով՝ նրանք զբաղվում արագացնում են կապիտալիստական հասարակությունը սոցիալիստականի փոխարկվելը»: Դա արդեն վորոշ չափով կարծես մոլորակ և — խոստում՝ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմ դարձնելու:

Հուլիսի 29-ին «Պորվերտսը» դեռ կանգնած և իր հեղափոխական դիրքում և հայտարարում և.

«Պետությունները մորիլիզացիային միայն մի պատասխան կա. ժողովրդի մշտական մորիլիզացիան»:

Բայց ահա հուլիսի 30-ին «Պորվերտսը» (գերման սոցիալ-դեմոկրատիան) խիստ թեքումն և կատարում, հեղափոխական ֆրակցիոնիզմի իր տոնը փոխում և խաղաղասիրական ցանկություններ: Յերբ վրա հասավ իսկապես վերջին մոմենտը, յերբ ամպը ճայլեց, յերբ զանգագումը հերավի մահադեպ եր և անհամար թվով տրված մոլորակներն սկսեցին հրամայական կերպով և համառորեն պահանջել վճարում, «սոցիալ-դեմոկրատիան» պրոլետարիատը (իմա դավաճան-առաջնորդները) բարձրում և իր վրայից ամեն մի պատասխանատվություն զեպերի համար և... պահանջում և համբերությամբ սպասել վերջին անհողողող հավասով, վոր ապագան՝ ինչ ել վոր լինի՝ պահանջում և ժողովուրդներին ի մի յեզրադրություն ձուլող սոցիալիզմին, արգարությանը չեմ մարդկությանը»: Ահա թե ինչ դարձան գերման սոցիալ-դեմոկրատիայի բոլոր սպառնալիքներն այն զեպում, յեթե Բելլինի իշխողները գնալու լինեն Ավստրիայի՝ համաշխարհային պատերազմը բորբոքողների հետ միասին:

Ոգոստոսի 1-ին «Պորվերտսը» ընթերցողներին և ընկերներին արած դիմումով կոչ և անում — ի նկատի ունենալով զանազան ժողովներում «լրտեսներին» բազմությունը (խոսքը վիլհելմի լրտեսների մասին չե, վորոնք աչալրջությամբ հետևում են մանավանդ սոցիալ-դեմոկրատներին, այլ «թշնամի» յերկրների լրտեսների մասին ե), — ամեն մարդ պետք և իր անձի վրա սահմանափակումներ դնի և «վորոշ գգուշություն յերեան բերի և՛ իր քաղաքական հայացքները բերանացի արտահայտելիս, ինչպես այդ պահանջում և իրերի դրությունը»:

Բայց ինչ վոր դեռ ժերտ չեր արել ոգոստոսի 1-ին ասելու «Պորվերտսը», համարձակվեց ասել սոցիալ-դեմոկրատական գաղափարային մամուլը, հասկանալի յե, վոր վերկից յեղած ցուցմունքով: Այստեղ արդեն սոցիալ-դավաճանություն բաց տրած ծրագիրն իր ամբողջ ծավալով և:

«Գերման կանայք և մանուկները չպետք և ուսական դաժանությունների զոհ դառնան: Գերմանական յերկիրը չպետք և զաղախների վորս դառնա...»

«Մեր ընկերները կռվի կգան... հայրենիքի վերաբերմամբ ունեցած իրանց պարսի պարզ գիտակցությամբ, վորի մեջ իրանցից չեն գերազանցում այժմյան խոսով-հայրենասերները»:

«Ազատ մամուլի ամեն մի բնագրասություն վերանում և, վորովհետեմ այժմ հարկ և խուսափել բնագրասելուց այն անձերին, վորոնց ձեռնումն և Գերմանիայի ամբողջ ապագան»:

Ոգոստոսի 4-ին պետք և բացվեր ուսյալատաղը կատարությունը պատերազմական վարկ տալու համար:

Մի որ առաջ (3-ին) կայացավ պարլամենտի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի նիստը, վորը վորոշեց ձայն տալ կառավարության պահանջած վարկի ոգին:

Կայինի գործը կատարվեց: Վորպես բանվոր ղեկավարող շահերի պաշտպան գերման սոցիալ-դեմոկրատիան այլևս մեռած եր: Նրան փոխարինել եր լակեյների և սարուկները կուսակցությունը, վոր ամեն բանում հպատակվում եր իր տերերի հրամաններին:

«Հիմա ժամանակ չկա քննելու և պարզաբանելու, թե ինչումն և կայանում սարսափելի աղետի պատճառը: Մենք կանգնած ենք իրողությունների առաջ, մենք նետված ենք սոսկալի ջրապտույտի մեջ, և պետք և պաշտպանենք հայրենիքը: Մեր գործերը գնում են Արևելք և Արևմուտք ցարի՝ մեզ վրա ուղարկած գնդերի դեմ, այն ֆրանսիացիների դեմ, վորոնք վրեժխնդրություն ծարավը դարձրել են սոսական բռնակալի գործիք:

Այժմ վճռում ե յերկաթը: Գերման ժողովուրդը պետք է պաշտպանվի: Պաշտպանությանը տանք մեր ուժերը»:

Բազմազան ե այս թունդ հայրենասիրական ձողովարանությունները հակադրել այն բանին, ինչ վոր գրվել եր հինգ որդրանից առաջ, վորպեսզի հասկացվի բանվոր դասակարգի մեծ վողբերգությունը, բանվոր դասակարգի, վոր հավատ եր ընծայել նման առաջնորդներին ե իր մեջ լայնքան ուժ ե արիություն հեր գտել, վոր վճռական ժամին իր յերեսը դարձնի նրանցից: Գերմանացի սոց.-դավաճաններն արժանի դուրս յեկան իրանց ֆրանսիացի համախոհներին: Յերը հարկ յեղավ, վոր նրանք ընտրություն անեն հեղափոխության ե բանվոր դասակարգի շահերի միջև մի կողմից ե իմպերիալիզմի ու կապիտալիստների շահերի միջև մյուս կողմից, նրանք գերադասեցին վերջինը՝ այդպիսով իրանց բախտը ե կյանքը կապելով վերջնի բախտի հետ:

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՏԵՎԻՑ

Ֆրանսիայի ե Գերմանիայի որինակից զժվար հե պատկերացնել, թե ինչպես եր տեղի ունենում խոսքով-հեղափոխականների փոխարկումը գործով բանվոր դասակարգի դավաճանների նաև այլ յերկրներում: Վորքան վոր ինտերնացիոնալի սնանկությունն սկսեց նրա գլխավոր սեկցիաներից, այնքան ել նրա յեկրորդական սեկցիաները դեպքերի շնորհիվ պետք ե վոր անխուսափելիորեն գնային նույն շավղով: Յեվ աչքի անցկացնելով դանազան յերկրների 1914 թ. սոց.-դեմոկրատական գրականությունը՝ մենք տեսնում ենք միջևնույն պատկերը: Պատերազմի նախորդելին—խիստ բացասական վերաբերմունք դեպի պատերազմը, թունդ հեղափոխական վոժ ե պատերազմի ուղղակի պատճառ յեղողների անխնա քննադատություն: Պատերազմն սկսվեց թե հե, ամեն ինչ վայրկենապես փոխվում ե: Սոցիալ-դեմոկրատիան դառնում ե պատերազմի ամենաակտիվ պաշտպանը, շրջապատում ե իրան ինչ-վոր ազատագրական մեծ շարժման լուսավառելով ե բանվոր դասակարգին կոչ ե անում պաշտպան կանգնել իր հայրենիքին, «ինքնապաշտպանվել»:

Հատկապես աչքի յեր ընկնում բելգիական սոցիալիստական կուսակցության դավաճանությունը, վորը պաշտպան դուրս յեկավ մարդկային ցեղի «աղնվաղույն» վորդուն—Ալբերտ թագավորին: Ուստի ե զարմանալի հե, վոր ոգոստոսի 4-ին բելգիական սոցիալիստական կուսակցության որդանում կարգում ենք մի

հոգված «Լեդհանուր յերջանկության համար» անունով, ուր ս.-դ. կուսակցության առաջնորդները «բրնով» յեն կանչում այն բուր մարդկանց, վորոնք արիարար իրանց ժողովրդի պաշտպան են դուրս գալիս:

«Հառաջ, բանվորների ե բուրժուաների դավակներ, հանդիպելով իրար գլխավոր շտաբի գրասենյակի շեմքում, ուր ցուցակներում տրձանագրում են կամավորներին այս որերս, յերը մեզ սպառնում ե վտանգ ե աղետ»: Հենց նույն ուր—ոգոստոսի 4-ին—ի պատասխան Ալբերտ արքայի գահական ճառի, վորով հայտարարում եր յերկիրը պաշտպանելու հաստատուն վճռականության մասին, Վանդերվել՝ ղեն պարլամենտի սոցիալիստական ֆրակցիայի անունից հայտարարեց.

«Հասել ե վայրկյանը, յեր սոցիալիստները կասարում են իրանց պարսֆն առանց վարչեզե տատանման: Մենք ձայն կսանք հոգուս ամեն մի վարկի, վոր կպահանջի կառավարությունը ազգի պաշտպանության համար»:

Սոստաձեռն» ե «աղնիվ» Ալբերտ արքան պարտքի տակ չմնաց: Հենց տեղնուտեղը մինիստր նախագահը հայտարարեց, վոր Վանդերվել՝ ղեն մինիստր ե նշանակվում:

Մեքնով մենք վերջացնում ենք II Ինտերնացիոնալի անկման ժամանակագրությունը յեվ անցնում ուրիժ ժամանակագրության, վոր յի յե հերոսությամբ յեվ բանվոր դասակարգի ու Ինտերնացիոնալի գործին ամենամեծ նվիրվածությամբ: Մենք անցնում ենք ուսական բոլժեվիկների կուսակցությանը, նրա առաջնորդ Վլադիմիր Իլիչ Լենինին յեվ նրանց վերաբերմունքին դեպի իմպերիալիստական պատերազմը:

ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԸ ՅԵՎ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Իմպերիալիստական պատերազմի սկզբին Ռուսաստանում հեղափոխական ալիքը հասավ արտասովոր բարձրության: 1914 թվականի հուլիսին Պետրոգրադում տեղի յեն ունենում բանվորների մասսայական գործադուլներ, փողոցներում բարբիկադներ են կառուցվում, փողոցային ջարդեր են տեղի ունենում ցարական զորքերի հետ, ե ողը հագնում ե բանվորական մոտալուս ապստամբության գոյորշիկներով: Այս շարժման մեջ ղեկավարող դերը խաղում են բոլշևիկները: Հենց այդ ժամանակ պատերազմ ե հայտարարվում: Յերկրում սաղմական դրություն ե մտցնվում, աջ սոցիալիստական կուսակցությունները—մենշևիկներն ու հո-

երները—հայրենասիրական խանդով համակված՝ Պլեխանովի բերանով հայտարարում են, թե «այն պատերազմը, վոր այժմ վարում է Ռուսաստանը, արդար պատերազմ է, յեվ վոր անբողջ պատերազմի ընթացքում պես է դադարեցնենք ամեն մի պայմար ուս կառավարության դեմ»: Պլեխանովի այդ խոսքերում բովանդակվում էր բոլոր ուս սոցիալ-հայրենասերների համար պատերազմի ընթացքում ունենալիք գործունեությունն պարզ ծրագիրը:

Միակ կուսակցությունը, վոր պատերազմին պատերազմ էր հայտարարել, դա բոլշևիկների կուսակցությունն էր:

Քիչ ավելի մանրամասն կանգ առնենք իմպերիալիստական պատերազմի ժամանակ բոլշևիկների ունեցած գործունեությունն վրա:

Սկսենք բոլշևիկների՝ Ռուսաստանի ներսում ունեցած գործունեությունից, վորը կապված է զլխավորապես պետական դումայի ֆրակցիայի հետ: Բոլշևիկները ֆրակցիան դումայում բաղկացած էր ընդամենը հինգ հոգուց, վորոնք են—Մուրանով, Բադայև, Պետրովսկի, Շագով և Սամոյլով: Նրանք գեմմայտերաթիվ կերպով թողեցին պետական դումայի այն նիստը, ուր ցարին հայրենասիրական վստահություն էր արտահայտվում և պատերազմը վարելու համար միջոցներ էլին հատկացվում: Դա այն ժամանակ բանվոր դատակարգի ներկայացուցիչների առաջին ցույցն էր, վորոնք հրաժարվեցին մասնակցություն ունենալուց իրանց ամենակատարի թշնամու—ռուսական ցարիզմի առաջ հասնող ձայնով հայտարարելով, իրանց զգացումների ղեկավար է նրան որհանելուց՝ իր և ոտար յերկրների աշխատավոր մասսաներին անխնայ վոչնչացնելու համար ուղղված դաշտ ուղարկելու: Բայց և յերբ պատերազմի հենց առաջին օրերում ստացվեց բոլշևիկների կենտրոնական կոմիտեի մանիֆեստը պատերազմի մասին՝ գրված Վլադիմիր Իլյիչի ձեռքով, վորի մեջ հեղափոխական պրոլետարիատի առաջ զրվում էր իմպերիալիստական պատերազմի փոխարինել քաղաքացիական պատերազմի խնդիրը, այն ժամանակ դումայի պատգամավոր բոլշևիկներն իսկույն ընկան այդ լուղունգներով բանվորական մասսաների խորքերը: Ոգտագործելով իրանց «պատգամավորական անձեռնմխելիությունը», Պետրովսկին, Բադայևը և Մուրանովն իրանց ժամանակը դումայում նվիրում էլին վոչ թե վեճերի և հետադարձական վարժությունների, այլ բացառապես և միմիայն գաղտնի գործունեություն:

Սակայն բոլշևիկ ֆրակցիայի անդամներին չաջողվեց յերկար մնալ իրանց պաշտոնում: Եռեմբերի 4-ին ամբողջ ֆրակցիան կալա-

նավորվեց կուսակցական խորհրդածոգովում Պետերբուրգից 12 վերստ հեռու:

15 թվականի մարտին կալանավորված պատգամավորները և նրանց համախոհները դատվեցին. զրանց մեջ էլին բոլշևիկների Կ. Կ.-յի մի քանի անդամներ: Նրանք բոլորն էլ յենթարկվեցին բազմամյա աքսորի և ուղարկվեցին Սիբիր:

Պատգամավորների և Կ. Կ.-յի անդամների կալանավորումն անշուշտ մեծ հարված էր կազմակերպչական տեսակետից, բայց զրա փոխարեն նրանց դատը հակառակոն ազդեցություն նշանակություն ունեցավ: Բանվոր դատակարգի կուսակցության բաբայական և քաղաքական կշիռն աճեց բազմապատկեց: Թե ինչ գեր խաղաց էլադես բոլշևիկների այդ պրոցեսսը, փառավոր կերպով ցույց է տվել ընկ. Լենինը 15 թվականին իր հոգվածներից մեկում, վորի վերնագիրն է. «Ինչ տպացուցեց Ռ. Ս. Դ. Բ. Կ. (բ) ֆրակցիայի դատը»: Մեղադրական ակտում բերված խոսքերը—«անհրաժեշտ և զենքն ուղղել վոչ թե իր յեղբայրների, ուրիշ յերկրների վարձված ստրուկների դեմ, այլ բոլոր յերկրների բուրժուական սեակցիոն կառավարությունների և կուսակցությունների դեմ»,—գրում է ընկ. Լենինը,—«դատի շնորհիվ կատարածին և արդեն տարածվել են Ռուսաստանում կոչ դեպի պրոլետարական միջազգայնությունը, պրոլետարական հեղափոխությունը: Ռուսաստանի բանվորների ավանդարդի դատակարգային լուղունգը հասել է մինչև ամենաընդարձակ մասսաները դատի շնորհիվ»:

Ավելորդ չէ և միանգամայն անհետաքրքիր էլ չէ այստեղ գիտել, վոր այն օրերում, յերբ ուսական ա. զ. պատգամավորները հեծում էլին բանտում՝ սպասելով ցարական դատաստանին, 110 զերման ա. զ. պատգամավորներ իրանց ձայնն էլին տալիս նոր 5 միլլիարդ ժողովրդական փող բաց թողնելու, ֆրանսիացի, բելգիացի, անգլիացի և ուս բանվորներ ու պուղապիներ կոտորելու գործի համար՝ հանուն յունկերական բանդայի իմպերիալիստական ախորժակների բավարարման, ինչպես այդ առիթով գրում էր ընկ. Լենինը: Միմիայն Կարլ Լիբկնիստն էր, վոր հետագայում սպանվեց գերման ա. զ.-յի առաջնորդների ձեռքով, վորը 111 պատգամավորներից մեկն էլ ինքը ձայն տվավ այդ վարկերի դեմ, այդպիսով կատարելով սոցիալիստի տարրական պարտականությունը, հեղափոխականի պարտականությունը:

Ռուսաստանի ներսում գործող բոլշևիկների հետևյալ փառավոր էջն էր ուղղափառ յունարեական կոմիտեներում մասնակցելուց հրաժարվելը, վորպիսի կոմիտեներն էլ ընկ. Զինովյակի

ձշգրիտ վորոշմամբ՝ ցարական կառավարութեան ստորադրյալ բաժանմունքներն և յին և պետք է նրան ոգնեյին վարելու պատերազմը: Մենշևիկները Գլոգլեի գլխավորութեամբ մտան ռազմա-արդյունաբերական կոմիտեներն ինքնակալ Ռուսիայի ախտիվ «պաշտպանութեան» համար:

Այժմ մենք անցնում ենք իմպերիալիստական պատերազմի ժամանակ բոլշևիկներին միջազգային մասշտաբով ունեցած դործունեութեան լուսարանութեանը: Այդ դործունեութեանն ամբողջովին և կատարելապես կապված է Վլադիմիր Իլյիչին անվան հետ, վորովհետեւ նա յե անմիջականորեն զեկավարել այդ դործունեութեանը, յեղել նրա իդեոլոգիական և կազմակերպչական վոգեորիչը և կիրառողը:

Պատերազմն սկսվելուց ընդ, Լենինը Զինովյեի հետ միասին Գալիցիայի մի հետ ընկած գյուղում էր: Ավստրիական կառավարութեանը հասկանալի չէ վոր շտապեց կալանավորել նրանց, բայց Լենինի արտասահմանյան բարեկամների բացառիկ ջանքերի շնորհիվ մի քանի շաբթից հետո նրան հաջողվեց անցնել Զվիցերիա: Այդ մոմենտից Զվիցերիան դառնում է բոլշևիկների կենտրոն: Այնտեղ Լենինը հրատարակում է իր «պատերազմի մասին թեղիսները», վոր Զվիցերական սոցիալ-դեմոկրատների միջոցով հանձնում է Լուզանյում կայացած Իտալա-Զվիցերական խորհրդածողովի քննութեանը: Արդեն այդ թեղիսներում պարզ ձևակերպված էր Վլադիմիր Իլյիչին տեսական իմպերիալիստական պատերազմի մասին, նրանցում նա խոսում է «պատերազմին պատերազմ» հայտարարելու անհրաժեշտութեան, այսինքն իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու մասին:

Հենց վոր Լենինը Զվիցերիա հասավ, այնտեղ սկսեց լույս տեսնել ՌՄԴԲԿ (Բ) կենտրոնական որդան «Սոցիալ-Դեմոկրատ»-ը: Այդ թերթը յերեվելի պատմական զեր խաղաց բոլոր յերկրների, ի միջի այլոց նա յե ուստական, սոցիալ-դոկինիստների դավաճանական զերը մերկացնելու և այն հեղափոխական ուժերն ի մի ժողովելու դործում, վորոնք հավատարիմ էյին ֆուսել պրոլետարիատի միջազգային համերաշխութեան գաղափարին և իմպերիալիստական պատերազմի հենց առաջին ամիսները բարձրացրել էյին պայքարի դրոշը III-րդ Ինտերնացիոնալի համար:

Դառնաք «Սոցիալ-Դեմոկրատի» հջերին, վորոնք կոգնեն մեզ գլուխ հանելու այն տիտանական աշխատանքից, վոր վիճակվեց Վլադիմիր Իլյիչին և ի զեմ նրա բոլշևիկների ամբողջ կուսակցութեանը կատարելու իմպերիալիստական պատերազմի տուրիներում:

1914 թվականի նոյեմբերի 1-ին, այսինքն պատերազմի սկզբից ուղիղ յերեք ամիս հետո, «Սոցիալ-Դեմոկրատի» մեջ լույս տեսավ Վլադիմիր Իլյիչի մի հոդվածը — «Սոցիալիստական Ինտերնացիոնալի դիրքն ու անելիքները»: Այդ հոդվածն իր մեջ պարունակում էր և՛ մեղադրական ահա III-րդ Ինտերնացիոնալի առաջնորդների դեմ, և՛ մահվան դատավճիռ՝ վորպես նրա հետևի մեք:

«III-րդ Ինտերնացիոնալը մեռավ՝ ուղղորտունիլմից հաղթված», — հայտարարում է Լենինը և նետում բոլոր յերկրների և ժողովուրդների բանվորական մասսաների մեջ III-րդ Ինտերնացիոնալի, սոցիալական հեղափոխութեան համար պայքարելու լոզունգը: Այդ հոդվածում Լենինն արտասովոր ուժգնութեամբ բաց է անում III-րդ Ինտերնացիոնալի առաջնորդների ամբողջ կեղծութեանը և նրանց ամբողջ դավաճանութեանը: Դայլ առ քայլ նա ջախջախում է կենտրոնի սոցիալիստների կեղծավոր քաղաքականութեանը, վորոնք վործում էյին պաշտպանելու III-րդ Ինտերնացիոնալի պրեսաիժը, պահպանելու նրան խորտակումից: Անցնելով «հայրենիքի պաշտպանութեան» հարցին, վորից առանձնապես ամուր էյին կառնում սոցիալիստական բանակին պատկանող դավաճանները, Լենինը հայտարարում է, թե «սոցիալիստական շարժումը չի կարող հաղթել հայրենիքի նախկին շրջանակներում: Նա ստեղծում է մարդկային հանրակեցութեան նոր, բարձրագույն ձևեր, յերբ ամեն մի ազգութեան աշխատավոր դանդաղների որինական պահանջները և առաջադիմական ձգտումներն առաջին անգամ կրավարարվեն միջազգային միութեան մեջ, այժմյան ազգային պաանեղները վոչնչանալու պայմանով»: Բայց Լենինը չի սահմանափակվում սոսկական թեղիսների ազդարարութեամբ և լոզունգներ «նետելով», — նա կետ առ կետ մասնանշում է, թե ինչպես և կարելի է հարկավոր հասնել մարդկային հանրակեցութեան նոր բարձրագույն ձևերին:

«Ժողովուրդների պատերազմը քաղաքական պատերազմի վերածելուց ճվիրված աշխատանք միակ սոցիալիստական աշխատանք է բոլոր ազգերի բուժուազիպի իմպերիալիստական զինված ընդհարման դառաբացնում... Բարձրացնել քաղաքացիական պատերազմի գրոցը»:

Մի յերկու շաբթից հետո լույս տեսավ Վ. Ի.-ի յերկրորդ հոդվածը նույն թեմայի մասին: Դա կոչվում է «Ինտերնացիոնալը և հայրենիքի պաշտպանութեանը»: Լենինը վերցնում է միջազգային սոցիալիստական համաժողովների բոլոր վորոշումները

պատերազմի հարցի վերաբերյալ, Ա-րդ Խնտերնացիոնալի յերկու տասնյակ տարիների ընթացքում արած բոլոր անթիվ խոստումներն այն մասին, թե նա թույլ չի տալ վոր պատերազմ լինի, և զրանք նետում նրա խայտառակված առաջնորդների յերեսներին, առաջնորդների, վորոնք վոսպնաթանի համար վաճառվել են համաշխարհային իմպերիալիզմին: «Դուք ստում եք», — հայտարարում է Լենինը, — «Խնտերնացիոնալը յերեսք չի տալ, թե սոցիալիստները պետք է պաշտպանեն հայրենիքը յուրաքանչյուր պաշտպանողական պատերազմում: Իմպերիալիստական պատերազմների զարաշրջանում դա ուղղակի անմատթյուն կլինի: Խնտերնացիոնալի վորոշումների հասարակ մի ժողովածու կարող է ծառայել իբրև ամենալավ մեղադրական ակտ ուղղորտությաննների դեմ, վորոնք քանդել են ալլ վորոշումները և զրանով Խնտերնացիոնալը հասցրել կործանման»:

Բայց «նրան փոխարինելու համար կգա նոր Խնտերնացիոնալ», — շարունակում է Լենինը: Յեվ այդ նոր Խնտերնացիոնալը հերավի յեկավ, յեկավ իբրև միակ ու որինավոր ժառանգ 1 Խնտերնացիոնալի բոլոր հեղափոխական տրադիցիաների, Պարիզյան Կոմունայի և այն բոլոր ազնվի և հերավի միջազգայնի, ինչ վոր կար Ա-րդ Խնտերնացիոնալում մինչև նրա առաջնորդների մեծ դավաճանությունը:

1915 թվականի փետրվարի 20-ից մինչև մարտի 3-ը կայացավ բոլշևիկների արտասահմանյան սեկցիաների խորհրդաժողովը Բեռնում: Բացի Վ. Ի. — ից զրան մասնակցում էին Է. Բ. Կրուպսկայա, Զինովյե, Տրոյանովսկայա, Բոգդանովիչ, Լիովինով, Բուխարին և Զվիցերակոն սեկցիայի 7 ներկայացուցիչներ: Լենինն այստեղ ասպարեղ է յեղում մի ղեկույցով ապիտացիայի անելիքների մասին ներկա մոմենտում և զործողությունների կոնկրետ ծրագիր և տալիս բոլոր հեղափոխական մարքսիզմը չգավաճանածներին և պրոլետարական համերաշխության իրենցին հավատարիմ մնացածներին:

Բայց ինչ վոր ամենանշանավորն է, այդ այն է, վոր խորհրդաժողովում վիճարանություն առարկա զարծավ Յեվրոպայի Միացյալ Նահանգներ ստեղծելու լուրնի հարցը, վորի հետ ընդգծվեց վոր «առանց ղեկմանական, ավստրիական և ուստական միապետությունը հեղափոխական ճանապարհով կործանելու՝ այդ լուրնի անմիտ և խաբուսիկ է»:

Իմպերիալիստական պատերազմի յետուն ժամանակ, այն մոմենտում, յերբ թվում էր, թե Գերմանա-Ավստրիական շաղկապը հաղթելու յե ամբողջ Յեվրոպային, այդպիսի մոմենտում

քննություն դնել Յեվրոպայի հեղափոխական Միացյալ Նահանգներ ստեղծելու հարցը — այդ բանին ընդունակ էին միայն բոլշևիկները:

Նույն թվականի սոստոսին Լենինը նորից և վերագտնում նույն հարցին և մի հատուկ հոդվածում մարգարեյարար գուշակում «սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը նախապես միքանի կամ նույնիսկ մի առանձին վերցրված կապիտալիստական յերկրում»:

Պատերազմի սկզբից դեռ կես տարի չեր անցել, վոր մամուլում սկսեցին յերևալ հաղորդագրություններ այն մասին, վոր պատերազմող կողմերի ղինվորների միջև յեղարարանալու քեպքեր են նկատվում: Այդ հաղորդագրությունները Վ. Ի. ն ուղտագործում է վորդես նոր դենք կավիլու համար սոցիալ-դավաճանների դեմ, վորոնք պնդում է հավատացնում էին, թե պատերազմող կողմերի սոցիալիստների միջև պատերազմի դեմ զործելու համար համաձայնություն կայացնելն անհնարին է: Լենինը ղիմում է նրանց այս հարցով. «Իսկ ինչ կլինի, — հարցնում է նա, — յեթե փոխանակ բուրժուազիային սատարելու, վորով այժմ ղրաղված ենք, կազմեյինք միջազգային կոմիտե ազիտացիա մեղելու համար, վոր պատերազմող կողմերի սոցիալիստները «յեղարարանային և փորձեյին մերձենալ» թե խրամատներում, թե ղորքերում ընդհանրապես: Ինչ կլինեյին հետևանքները միքանի ամսից հետո, յեթե այժմ, պատերազմի սկզբից վեց ամիս անց, հակառակ սոցիալիզմին դավաճանող բոլոր ղլիստների, առաջնորդների և առաջին մեծություն առաղբի՝ ամեն տեղ աճում է ղիմաղրությունը վարկերի համար ձայն ավողների և միլիտարիստների դեմ, և ղինվորական իշխանությունը մահով և սպառնում յեղարարանալու համար»: Յեվ ղիմելով Կաուտսկուն, վորը միամտորեն հարցնում է, թե վճրն է լավ — սեփական յերկրի հաղթությունը, թե պարտությունը, Լենինը մի ուրիշ հարց է տալիս նույն թեմայի վերաբերմամբ — վճրն է լավ. «Կուրյե՞լ սեկսեների պատերազմում, մեղալով կուլը յեվ աճողական սեռուկ, քե՞ մեռնել սեռուկուքուցը վերացնելու նպատակով սեռուկների միջեվ յեղբայրանալու փորձեր աճելու համար»:

Իլյիչի և նրա արտասահմանյան բարեկամների հետագա գործունեությունը նվիրված էր բացառապես հեղափոխական սոց. ղեմոկրատիայի ուժերի կազմակերպությանը և միացմանը: Այդ հակամիլիտարիստական գործունեություն հետևանքների յերկար սպասելու հարկ չեղավ: «Հոսանքի դեմ» լողացողների

թիվն սկսեց որեցոր մեծանալ և նրանց ձայնը հնչել ուժգին և ուժգին՝ մանկով խրամատները, ճեղքելով-անցնելով լարային ցանկապատերը, թափանցելով այնտեղ, ուր արշալույս և ցեխի մեջ ընկած ելին միլլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ՝ դատապարտված տանջանքի ու մահվան՝ բուրասների արքաների և սոցիալ-դավաճան լակեյների շնորհիվ:

Պատերազմն արդեն շարունակվում է մի տարուց ավելի: II-դ ինտերնացիոնալը վորպես բանվոր դատակարգի կազմակերպություն դուրս գալիս ունենալուց բոլորովին դադարում է: Լենինը հարց է դնում դատակարգային կուլի կարմիր դրոշակին բոլոր հավատարիմ մնացածների միատեղ ժողովելու անհրաժեշտություն մասին, չնայած բոլոր դժվարություններին, հետագա դործունեությունը ծրարելու՝ մշակելու՝ վերջ կազմակերպչական ձև տալով այդ դործունեությունը:

ՑԻՄՄԵՐՎԱԼԴ

1915 թվականի սեպտեմբերի 5-ին Ցիմմերվալդում կայացավ ինտերնացիոնալիստների առաջին խորհրդաժողովը: Պրոլետարիատի ընդհանուր լիտարգիայի և II ինտերնացիոնալի՝ գենը կատարելապես հանձնելու ժամանակաշրջանում Ցիմմերվալդի լողունները, վերոնց մեջ առաջին անգամ տրվեց համաշխարհային պատերազմի հավաքական, միջազգային, դատակարգային լուստարանությունը, — հանդիսացան այն ուժը, վորը դեռ իրան գրավեց բոլոր թշնամանող յերկրների բանվորների և բանվորուհիների հեղափոխական զանգվածների ուշադրությունը, զարծալ նոր դրոշակ պատերազմի դեմ մղվող պայքարում, նոր ինտերնացիոնալիստների ստեղծելու համար:

I Ցիմմերվալդյան խորհրդաժողովի անունից բաց թողնված մանիֆեստում պատերազմի, նրա նպատակի և մեթոդների պատասխանատվությունը քցվում է վոչ միայն նրա անմիջական պատճառ դարձողների վրա — պատերազմող կողմերի բուրժուական կառավարությունների վրա, այլև բանվորների այն ներկայացուցիչների վրա, վորոնք դատակարգային պայքարը դադարեցնելու, դատակարգային խաղաղություն հաստատելու կոչ էլին արել, ձայն էլին տվել հոգու ազգական վարկերի և իրանց կառավարությունների տրամադրությունն էլին ներկայացրել ծառայելու համար և՛ իրանց մամուլը, և՛ իրանց հեղինակությունը, և՛ իրանց «սոցիալիստ»-միլիտարներին իբրև պատանդներ:

Ցիմմերվալդի լողունները պատերազմի անցան բոլոր դորաշղթաները, բոլոր լարային և ուրիշ ցանկապատերը: Ցիմմերվալդի մասնակիցների դեմ, նրա կողմնակիցների դեմ սկսվեց կատաղի գրգռում: Գերմանիայում և ուրիշ յերկրներում սկսեցին մատաներով կախնալորել Ցիմմերվալդի բոլոր կողմնակիցներին: II ինտերնացիոնալի առաջնորդների «բարեհաճ» համաձայնությամբ և մասնակցությամբ կախնալորվում է Կարլ Լիբկնեխտը, Ռոզա Լյուքսեմբուրգը և գերման սոցիալ-դեմոկրատիայի հին պարագլուխ Ֆրանց Մերինգը: Հալածանքի և բանտարկություն են յենթարկվում նաև Ցիմմերվալդի ուսուցիչները, վոր ապրում էլին Արևմտյան Ցեմբուրգի յերկրներում:

Բայց պատմության ընթացքը կանգնեցնելու բոլոր փորձերը ջախջախվեցին՝ զարնվելով համաշխարհային պրոլետարիատի հեղափոխական ավանդարդի աննկուն կամքին: Հետզհետե սկսեց անցնել շովինիստական ծխահարությունը (угар), վոր պատերազմի առաջին տարիները համակել էր բանվոր մատաներին: Պատերազմի և նրա դադարաբախտների դեմքը պարզվեց բազմահազար բանվորների և բանվորուհիների համար, և նրանք ատելություն ու անեծքը շրթունքներին յերես թեքեցին նրանցից, ովքեր սոցիալիզմի անունից հրավիրել էլին յերաջրասպանություն և սլոդիստական համերաշխության անունից կապիտալիստ հաճ գործ էլին կատարել: Մերթ աշատեղ, մերթ այնտեղ բռնկվում են դործագուհներ, բանվորական ցույցեր, սովի հետևանք ապստամբություններ: Հաճախակի յերևույթներ են դառնում գնդերի և ավելի խոշոր դորամասերի մերժումը հարձակման գնալու, իրանց իշխանություն հրամանները կատարելու:

Բեկումն առաջացավ, մենք անցանք նոր շերտ — զանազան յերկրների և ժողովուրդների բանվորների միջև պատերազմով խզվող կապը վերականգնելու համար վարվող ամենամոտեման և անողոր պայքարի շերտը:

Ավելորդ և ընդարձակ խոսել այն մասին, վոր այդ խորհրդաժողովի աշխատանքներում ամենագործոն գերն է խաղացել Վ. Ի. -ը: Այդ խորհրդաժողովում էր, վոր Լենինի և Լեգեբուրի (ձախ գերման սոցիալ-դեմոկրատ) միջև չափազանց հետաքրքիր ընդհարում առաջացավ. Լեգեբուրն առում էր. «Հեշտ բան է նրա (Լենինի) համար արտասահման նստած, ևմիլլիոնային, քաղաքացիական պատերազմ քարոզել, բայց ապա մեկ թող գնա Ռուսաստան և ցույց տա, թե ով կա իր մեջքին կանգնած (իրան հետևող)»:

Այդ նախատխնքին վ. Ի. — ք պատասխանեց, վեր ինքը գտնվում է ձիշտ նույն դրություն մեջ, ինչ վոր Մարքսն էր «Կոմմունիստական Մանեֆեստը» կազմելու ժամանակ, և վոր յերբ կհասնի ժամանակը, նա կկարողանա իր տեղը լինել և խույս չտալ իշխանությունը ձեռք առնելու ծանր պարտականությունից քաղաքացիական պատերազմում հաղթություն տարած ժամանակ:

Կ Ի Ե Ն Տ Ա Լ

1916 թվականի ապրիլին Կիևնախում նորից ժողովելցին Յիմմերվալդում բոլոր յեղածները և առաջին խորհրդածողովից անցած ժամանակում նրանց հարածները: Այդ խորհրդածողովը հայտնի յե Յիմմերվալդյան անունով: Չնայած վոր առաջին և այդ խորհրդածողովների միջի ժամանակամիջոցն այնքան էլ մեծ չէր (անցել էր ընդամենը 7 ամիս), բայց և այնպես Յիմմերվալդի լողունները մասել էին ափսոսել և ափսոսել խորհրդով ընդգրկելով բանվորների և բանվորուհիների ափսոսել և ափսոսել խոր մասաներ:

Այդ խորհրդածողովի անունից բաց թողած մանիֆեստը գրվում է բոլոր քաղաքների և գյուղերի բանվորներին: Այդ մանիֆեստն առաջինը ափսոսել մեծ պարզություն և բաց անում իմպերիալիստական պատերազմի ամբողջ գաղափարը:

«Այդ համընդհանուր սղանդանոցի իսկական նպատակը, — ասվում է մանիֆեստում, — վոմանց համար այն բոլորի ապահովությունն է, ինչ վոր նրանք թալանել են դարերի ընթացքում, բազմաթիվ պատերազմների ընթացքում, մյուսները ցանկանում են աշխարհիս նոր բաժանում, վորպեսզի ափսոսել մեծացնեն իրանց տիրապետությունները. նրանք ուզում են բռնադրավել նոր շրջաններ, կոոր-կոոր անել ժողովուրդներին, հասցնել նրանց հասարակ ստրուկների և իրաների դերին: Մի թողնեք վոր ձեզ խորհեն... Գոյություն ունի մի միակ միջոց, վորով կարելի յե ապագա պատերազմների առաջն առնել. դա քաղաքական իշխանությունը ձեռք բերելն է և կապիտալիստական սեփականությունից փոխադարձ բանվոր դասակարգի ձեռքով»:

Վոչնչանել կապիտալիստական սիստեմը, փոխարինել այն սրտադրությունից միջոցների ընդհանրացմամբ, մուծել սոցիալիստական հասարակարգ — այսպես էր ընդհանուր գծերով Կիևնաալի խորհրդածողովի գեվիդը:

ՌՈՒՍԱԿԱՆ ՇԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Պատերազմի ծարիններում ունեցած իր գործունեությունը Լենինն իր դեմ գրգռեց թե բուրժուազիան և թե մենշևիկներին: Թե առաջինները և թե յերկրորդներն սկսեցին լուրեր տարածել, վոր իբր Լենինը գերմանական գործակալ և և ուրիշ վոչինչ: Բայց այդ գրգռումն ափսոսել ուժեղացավ այն ժամանակ, յերբ Իլյիշի բերանով բոլշևիկները պաշտոնապես հայտարարեցին, վոր ցարական Ռուսաստանի պարտությունը համարում են բանվոր դասակարգի համար փոքրագույն չարիքը:

Լենինի «հարվածայնությունը» (пораженчество), նրա հստակ և հեղափոխական տեսակետն էլ ափսոսել նպատակին բանվոր դասակարգի դիտակից կադրի համախմբվելուն բոլշևիկների շուրջը: Չնայած պատերազմի ամբողջ ընթացքում յեղած կատաղի քաղաքական հարձակմանը՝ բոլշևիկների կուսակցությունն ազդեցություն անշուշտ և սիստեմատիկ կերպով աճում էր: Բանվորների բոլոր յեխումներն անցնում էին բացառապես նրա դեկալարությունը և նրա լողուններով:

1917 թվի փետրվարին, յերբ ապստամբված աշխատավոր մասսաների գրոհով առաջավից ցարական կառավարությունը, յերբ ուսական հեղափոխության լուրը տարածվեց ամբողջ աշխարհում, ամենքի համար պարզվեց, վոր Ռուսիան անցել են, վոր այլևս սկսվում է նոր դարաշրջան, վոր Ռուսիան անցել են, վոր այլևս չկա և չի կարող լինել վերադարձ գեպի անցյալը: Մարդկությունը կաշկանդող շղթաները մի տեղից կտրվել են: Բանվորները և գյուղացիների Ռուսաստանը հայտարարել և ամբողջ աշխարհին, վոր նա իր բախտն իր ձեռքն է առնում և վոր շարունակել անմիտ, յեղաշրջանադարձ պատերազմը, վորը ձեռնառել յե միայն բանկիրների և կալվածատերերի մի փոքրիկ խմբակի, նա չի կամենում և չի շարունակելու: Մենշևիկների և եսերների ձեգերն ապստամբներին սանձահարելու, գործարանատերերի, բի ձեգերն ապստամբներին և բանկիրների բոլոր ջանքերը մի կերպ առկալվածատերերի և կանգնեցնելու հեղափոխության այնուհետան ջը պահելու և կանգնեցնելու այն կամ հետ դարձնելու, վոր այնպարզացումը, կանգնեցնելու այն կամ հետ դարձնելու, վոր այնքան ցանկանում էր Միլյուկովը — կապիտալիստական Ռուսաստանի առաջնորդը և գաղափարախոսը, — ապարդյուն դուրս յեկան:

Անցավ ութ տանջալից ամիս, և 1917 թ. հոկտեմբերին իշխանությունն անցավ բանվորների և գյուղացիների ձեռքը: Այդ ժամանակվանից սկսվում է պայքար նոր հասարակարգի բոլոր թշնամիների դեմ. պայքար կոմունիզմի համար:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ
ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ

Այն, ինչի մասին արդեն մի քանի տարի խոսում եր Լենինը, դեպի վորը կոչում եր բոլոր աշխատավորներին, սկսվեց: Ռուսական բանվորները վոչ թե խոսքով, այլ գործով հայտարարեցին պատերազմին պատերազմ: Նրանց միայն առաջնորդ եր հարկավոր նոր պատերազմը վարելու համար: Յեվ այդ առաջնորդը չեղավ Լենինը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ

Ռուսական հեղափոխությունից հետո ժողովուրդը չէր կարող հաշտվել իր իրավունքների խախտման հետևանքով առաջացած վնասներին։ Ռուսական հեղափոխությունը միջազգային նշանակություն ունեցող հեղափոխություն դարձավ։

Տակավին շարունակվող իմպերիալիստական պատերազմը, վորին բանվորա-գյուղացիական Ռուսաստանն ինքնըստինքյան հասկանալի յև վոր արդեն չէր մասնակցում, ավելի մեծ կատա-ղության և ատելության հասցրեց Յիվրոպայի տանջված ժողո-վուրդներին իմպերիալիստների և բռնավորների դեմ: 1918 թվա-կանի վերջում Գերմանիայում հեղափոխություն բռնկվեց: 1914 թվականի իմպերիալիստական պատերազմի պատճառ յեղողնե-րից մի գլխավորը վերացավ: Բաւարիան և Հունգարիան խոր-հրդային հանրապետություններ կազմեցին: Իտալիայում սկսվեց կատաղի պայքար իշխանությունը բանվորների և գյուղացիների ձեռքն առնելու համար:

Վոչ միայն կապիտալիստական յերկրներում, այլև Արևելքի ճնշված ժողովուրդներն իմպերիալիզմի դեմ յեւան: Պայքար սկսվեց զաղութային յերկրներում:

Ամենուրեք, ուր զոյություն ունի կապիտալիստական սխա-
տեմ, ծառանում ելին բանվորների միլիոնավոր զանգվածներ,
վորպեսզի միանգամ ընդմիշտ վերջ տան բռնության աշխարհին:
Խորհրդային Ռուսաստանը դարձավ սոցիալիզմի համար մզվող
պայքարի կենտրոն: Ամբողջ աշխատավոր մարդկությունն իր
աչքը հանեց Խորհրդային Ռուսաստանի վրա:

Ռուսաստանը դարձավ սոցիալիստական ստեղծագործություն
և կոմունիստական պրոպագանդայի կենտրոն:

Միջազգային պրոլետարիատի հայրենիքն այնուհետև դարձավ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւնը:

Բանվորա-գյուղացիական կառավարութեան առաջին քայլը
հողի և խաղաղութեան մասին գեկերեան եր:

Բայց յեթև հողի բանը համեմատաբար հեշտ էր, պետք էր միայն ուղղամտորեն և հեղափոխականորեն, առանց մենշևիկական—հոերական կիսամիջոցների, աշխատել վերացնել աղքատ գյուղացիության կարիքները,—խաղաղության խնդիրը լուծելը մի քիչ ավելի դժվար էր։ Խաղաղությունը ալ չէր կարելի, այն պետք է հասնա՞վէր մի յերկրորդ պատերազմող կողմի հետ, իսկ այդ կողմը վոչ ալ վոք էր, յեթև վոչ իմպերիալիստական Գերմանիան և նրան հերկայացնող Վիլհելմ II-ի կառավարությունը։ Այսպիսով հեղափոխություն հաղթություն և իշխանությունը բանվորա-գյուղացիական կառավարություն ձևքն ընկնելու մյուս ուրը պետք է իր ամբողջ միծությունը ծաղեր այն հարցը, թե ինչպես պետք է հաստատվի այդ այնքան անհրաժեշտ հաշտությունը, թե ինչպես պետք է հանուն հեղափոխության և աշխատավոր մասսաների իրական շահերի համաձայնություն գալ հեղափոխության և բանվոր դասակարգի յերկվյալ թշնամիների զենքերալներ Հոֆմանի, Լեոպոլդ Բավարացու և գերմանական սահմանի իմպերիալիզմի մյուս հերկայացուցիչների հետ։ Հեղափոխության շահերը խաղաղություն ելին պահանջում է հետևավարկա համաձայնություն իմպերիալիստների հետ, և խորհրդավոր կառավարությունն ու կոմունիստական կուսակցությունն արին այդ բանը։ Բայց դա, ինչպես հետո կտեսնենք, այնքան էլ հեշտ բան չէր։

[illegible][illegible]

մի ուրիշ պետություն»... Յեվ ապա միջինության բանը. «Իհարկե, այն խաղաղությունը, վոր մենք կենքենք, անպատվարեր խաղաղություն կլինի, բայց մեզ ժամանակ և հարկավոր սոցիալական բարենորոգումներ մտցնելու համար, մեզ անհրաժեշտ և ամրանալ, իսկ դրա համար անհրաժեշտ և ժամանակ: Մեզ անհրաժեշտ և բուրժուազիային խեղդելը մինչև վերջը հասցնել, իսկ դրա համար անհրաժեշտ և, վոր մեր յերկու ձեռքն ել ազատ լինի. այսպես անելով՝ մենք կազատենք մեր յերկու ձեռքը և այն ժամանակ կարող կլինենք հեղափոխական կոթով մղել միջազգային կապիտալիզմի դեմ»: Լենինի տեսակետի հետ սկզբում չէին համաձայնում: Բանն այնտեղ եր հասել, վոր Վ. Ի.-ը հայտարարել եր, թի կկ-յից դուրս կգա և կհրաժարվի կոստավարչական լիազորություններից: Գերմանացիներին հետ բանակցություններ վարվեցին յերեք անգամ: Այդ բոլոր ժամանակ լենինյան, միակ ուղիղ տեսակետի միջանի հակառակորդները հետզհետե գալիս էին այն համոզմունքին, վոր իրանք անիրավացի չեն, և մասամբ միացան նրան:

1918 թվի փետրվարի 23-ին կուսակցության կկ-ն ձայների մեծամասնությամբ վորոշեց անհապաղ ընդունել գերմանական պայմանները, և մարտի 3-ին «անպատվարեր», — ինչպես վերադառնալ մի Իլյին եր անվանում, — խաղաղությունը կնքվեց:

1918 թվի մարտի 15-ին խորհուրդների Համառուսական համագումարը հաստատեց զաշնագիրը 784 ձայնով 261-ի դեմ և 115-ի ձեռնպահությամբ: Դա նշանակում եր, թե բանվորա-դուրա-դացիական Ռուսաստանի ահալին մեծամասնությունը հաստատեց զաշնագիրը, վոր կնքել եր խորհրդային կոստավարությունը գերման խմբերի խախտների հետ հանուն փրկության «հեղափոխության առողջ մանկան — Սոցիալիստական Հանրապետության» (1. Ե. Ե. Ե.):

Գերման խմբերի խախտները հրճվեցին: Հեռագրերն էր թռան ամեն կողմ, վորոնց մեջ փառք էին տալիս գերմանական զենքին և հույսեր էին արձարժում, վոր համաշխարհային պատերազմի վերջը մատալուտ և: «Հեռատես», Հոֆմանները և կյուլմաններն այն ժամանակ դեռ չէին հասկանում, վոր Բրեստի հաշտությունն ստորագրելով՝ նրանք իրանց մահվան դատավճիռն են ստորագրում:

1918 թվի նոյեմբերին Գերմանիայում հեղափոխություն բռնկվեց, իսկ դրան հետևող զեպքերը վոչնչացրին գերմանական խմբերի իրավունքը, դրա հետ միասին և Բրեստում կնքված թալանչիական հաշտությունը:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե

Բրեստի «անպատվարեր» ավաղակային հաշտությունը կնքելուց խմբերի խախտական պատերազմն ընդհատվեց (այն ել վաղ լիովին) միմիայն նրա մի մասում, իսկ մյուսներում՝ դեռ շարունակվեց մի տարուց ավելի... Կապիտալիստական խեղափոխության աշխարհը բաժանվեց յերկու թշնամի բանակի, վորոնցից ամեն մեկը ձեռնում եր ինչ ել վոր լինի գործը հասցնել «վախճանին»: Յեվ իրավ վոր պատերազմը շարունակող յերկրները զենքերը ցած չգրին մինչև այն ժամանակ, յերբ պատերազմող կողմերից մեկին հրավի դուրս մղեցին շարքից և չոքեցրին: Այդ կողմը Ավստրո-Գերմանական կոալիցիան դուրս չեկավ: Չորս տարուց ավելի մենմեակ ղրմանալով ամբողջ աշխարհի միացած մասի դեմ՝ նա վերջի վերջը չղիմացավ, պայթեց լարվածությունից և խաղաղություն աղաղակեց:

ՎԵՐՍԱԼԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

1918 թվի նոյեմբերի 11-ին, այն որը, յերբ Գերմանիայում հեղափոխությունը հաղթելուց և վիլհելմ կայսրին տապալելուց իշխանությունն անցավ ժողովրդական լիազորներին խորհրդին, մարշալ Ֆոշը՝ ֆրանսիական սպարապետը — գերմանական ներկայացուցիչներին թելադրում և զինադադարի արտասովոր ծանր պայմաններ: Զինադադարները վերանորոգվեցին յերեք անգամ, և վերջապես 1919 թ. ապրիլի 18-ին Գերմանիան հրավիրվեց ապրիլի 25-ին վերադառնալ «այնտեղ բնգունելու զաշնակիցների և նրանց հարած պետությունների կազմած խաղաղության դաշնագրի բնագիրը»: Պայմաններն այնքան ավաղակային և զազանային էին, վոր գերմանական ներկայացուցիչները սիրտ չարին ստորագրելու, և միայն 3 ամսից հետո, 1919 թ. հունիսի 28-ին, հենց վոր Գերմանիան համոզվեց, վոր աննպատակ և ավելի ձեռք ձեռքը, զաշնագրին ստորագրվեց:

Վերադառնալ «խաղաղ» զաշնագրով Գերմանիային կոտորելապես մերկացրին: Ամենից առաջ նրա հողամասերը կտրուցին ամեն կողմից: 15.000 ք. կիլոմետր տարածություն ունեցող Ելզաս-Լոթարինգիան անցավ Ֆրանսիային: Լեհաստանն ստացավ Պոդլանի մեծ մասը և Արևելյան Պրուսիայի մի մասը, 43.000 ք. կիլոմետր տարածությամբ: Բելգիան և Չեխո-Սլովակիան նույնպես մի-մի համեղ պատան ստացան: Գերմանական խոշորագույն նավահանգիստներ Դանցիգը և Մեմելը Գերմա-

նիտայից «գատվեցին»: Սաարի շրջանն իր խիստ հարուստ քարածխահանքերով «գիջվեց» Ֆրանսիային 15 տարով՝ իրրև կոմպենսացիա Հյուսիսային Ֆրանսիայի ածխահանքերը կործանվելու համար: Իր բոլոր գաղութներին, վորոնք ունեյին 3 միլիոն ք. կիլոմետր տարածություն և 14 միլիոն բնակիչ, Գերմանիան պարտավոր էր նույնպես հրաժարվել հոգուտ դաշնակից և նրանց հարած պետությունների:

Սակայն դա դեռ ամենը չէ: Վորպեսզի այս բոլոր «գիջումներն» իրանց համար ապահովեն և նրանց անվտանգ կերպով տիրելու գարանտիա ունենան, այլևս վորպեսզի կողոպտված Գերմանիայի վրեժխնդրությունից վախ հունենան, գաշնակիցները նրան պարտադրեցին. 1) բանակ ունենալ, բաղկացած 100.000 մարդուց վոչ ավելի, վորոնց թվում 4.000 սպայից վոչ ավելի. 2) ծովային նավերի տարողությունը 10.000 նորմից ավելի չպետք է լինի (գրահակիրները համար). ստորջրյա նավերը և առևտրական նպատակներով այգպիտի նավեր շինելն արգելվում են. 3) չունենալ ռազմական ոգատորմ վոչ ցամաքում, վոչ ծովում. 4) Հոկտոբի ձախ ափի ամբողջությունները պետք է քանդվեն, իսկ հարավային և հյուսիսային սահմաններում մասամբ պետք է հավաքվեն. Հելքոլանդի ռազմական հարմարությունները և նավահանգիստները պետք է վոչնչացվեն:

Գերմանիայի ամբողջ պատերազմական և առևտրական նավատորմը բաժանվեց գաշնակիցների միջև. նրանց լիակատար սեփականությունը գարծավ նայև իրանց անցած շրջաններում գտնվող դույքը, բայց ավագակ-հաղթողները դրանով չբավականացան: Այդ բոլորից դատ Գերմանիայի վրա դրվեց դրամական հսկայական կոնտրիբուցիա: Նախ այդ կոնտրիբուցիան նշանակվեց 107 միլիարդ վոսկի բուրլի, բայց հետո «գթալով»՝ հաղթողները քչացրին-դարձրին 67 միլիարդ վոսկի ոսրլի: Հասկանալի չէ, վոր հարկ չ'լա խոսել այն մասին, վոր Գերմանիան հավիտյան չի կարող վճարել այգպիտի հսկայական կոնտրիբուցիա:

Ավստրիային, Հունգարիային և ավստրո-գերմանական շաղկապի մյուս մասնակիցներին նույն բանն արին: Նրանց թալանեցին ամեն կողմից, խեցին բառի բուն նշանակությամբ ամեն մի արժեքավոր ու անհրաժեշտ բան: Նրանց դարձրին մուրացկաններ, անընդունակ վոչ միայն ինքնապաշտպանություն, այլ ուղղակի ապրելու: Դաշնակիցները տոնեցին հաղթանակը: Նրանք վոչ միայն կործանեցին գերմանական իմպերիալիզմը, այլ արյունաղուրկ դարձրին գերման ժողովրդին, քամեցին նրա ամբողջ կենսական հյուսթիւրը:

Բանկիրների հանձնաժողովը, վորի գլուխ էր կանգնած հայտնի ամերիկացի կապիտալիստ Մորգանը, ուսումնասիրելով Գերմանիայի դրությունը, յեկավ հետեյալ միահամուռ յեղբակացություն.

«Յեթև Գերմանիայի վրա մնան այգպիտի ուժերից վեր պարտքեր, նա անխուսափելիորեն կատարելապես կքայքայվի և կմեռնի»:

ԼԵՆԻՆԸ ԲՐԵՍՏԻ ՅԵՎ ՎԵՐՍԱԼԻ ՆԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի կողմից—Գերմանիայի ձեռքով Բուսաստանի վզին վաթաթած, իսկ մյուս կողմից—Անգլիայի և Ֆրանսիայի ձեռքով Գերմանիայի վզին կապած իմպերիալիստական խաղաղ դաշնագրերի յերևելի բնույթագրությունը ավել և վլ. Իլյին իր՝ «Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն ետապը» գրքի ֆրանսիական հրատարակության առաջաբանում:

Ահա թե յնչ է գրել Վ. Ի.-ը.

«Միապեսական Գերմանիայի քեյադրած՝ Բրես-Լիսովսկի հաճությունը, ապա ռաւ ավելի գազանային յեվ սոոր վերսալան հաճությունը, վոր քեյադրված է «դեմոկրատիկ» Ամերիկայի յեվ Ֆրանսիայի հաճապեսությունների, այլեվ «ազաւ» Սեգլիայի կողմից, մարդկությանն անեհաոգակաւ ծառայությունը մասուցին, մերկացեղով քե՛ իմպերիալիզմի վարձկան քաճափային կուլիներին յեվ քե՛ ռեակցիոն մեչաճներին, քեյեվ գրանի իրանց անվանում եյին խաղաղասերներ յեվ սոցիալիստներ, վորոնք յերգում եյին «ուլիլընիզմ», ապացուցում եյին խաղաղության յեվ բարեհորոգումների հեհաւվորությունն իմպերիալիզմի ուրով:

Տասնյակ միլիոնավոր դիակներ յեվ հաճմանգամներ, վորոնք մճացել են պաւերազմից, վորը սեղի յե ունեցել նա համար, վոր Ֆինանսական ավագակների անգլիական կամ գերմանական մի խումբ պեւս է ավելի հասույք ստանա, յեվ ապա նական մի խումբ պեւս գաճաբերն» առաջներում յսեանված աչգ յերկու «խաղաղ գաճաբերն» առաջներում յսեանված արագությունը բաց են անում՝ բուրժուազիայի ձեռով հարվածված, ջախջախված, խաբված, հիմարացված միլիոնավոր յեվ ճառնյակ միլիոնավոր մարդկանց աչքեր: Պաւերազմի սեղծած համաշխարհային բայբայման հողի վրա անում է աչպիտով համաշխարհային հեղափոխական ճգնամար, վորը, վորման ել համաշխարհային հեղափոխական ճգնամար, վորը, վորման ել յերկաւ ու ծանր պերիպեթիաներ անցեղու լինեն, յի կարող վերջանալ այլ կերպ, յերե վոչ պրոլետարական հեղափոխությամբ յեվ նա հաղթությամբ»:

ՎՈՐՔԱՆ ՆՍՏԵՑ 4-ԱՄՅԱ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ «ՏՈՒՐՈՒ-
ԴԻՄԲՈՑԸ» ՅԵՎ ԻՆՁ ՈՐԻ ՀԱՍՑՐԵՑ

Այս հարցին ամբողջական ամամբ, ինչպես նաև նրա
զատ-զատ մասերին սպառող պատասխան տալը՝ հատկանալի չէ՝
վոր անհնարին է։ Վերջին վոր հետպատերազմյան քաղաքական
և տնտեսական իրադարձությունները գլխավորապես պատերազ-
մի արդյունք են, այնքան էլ՝ հատկանալի չէ՝ վոր հնար չկա, ա-
սենք վաղաժամ էլ և «գումարել», թե աշխատավոր մարդկու-
թյան վրա ինչ նստեց այն միջնադար, վոր 1914 թվականին
ծաղեց ազգային և միջազգային տրեստներին, սինդիկատներին և
կարտելներին միջև։ Այն բոլոր թվանշանները, վոր գործ են ա-
ծում տնտեսագետներն ու վիճակագիրները, շատ-շատ հիտու չեն
ճշգրիտ լինելուց և տալիս են միայն մոտավոր գաղափարն այն
մասին, թե աշխարհին ինչքան նստեց խմելախաղիտական պա-
տերազմը։

Իսկ ինչ են տուում այդ մոտավոր թվանշանները։

Պատերազմին մասնակցող բոլոր քաղաքացիների և պետու-
թյունների ունեցվածքը միատեսի մինչև պատերազմը հաշվվում
էր 1.440 միլիարդ վոսկի բուրլի։ Պատերազմին մասնակցողների
ստացած մթերքների արժեքը տարեկան հաշվվում էր 200 միլ-
լիարդ ուսլի։ Յեվ ակա սկսվեց իմպերիալիստական պատերազ-
մը, վորը չորս տարուց ալեկի սեվեց չեվ արժեցավ 720 միլ-
լիարդ վոսկի բուրլի, ալսիցեց պատերազմին մասնակցողների
ազգային ամբողջ կարողության կեսը։ Այդ յերկրների ազգային
տարեկան յեկամուտը պատերազմի ժամանակ քչացավ գոնե մի-
յերրորդով և 200 միլիարդի փոխարեն հավասարվեց մոտավորա-
պես 140 միլիարդի։ Պատերազմի անմիջական կարեքների վրա
գնում էր այդ ազգային տարեկան հասույթի կեսը, այսինքն 70
միլիարդ, հետևապես ամբողջ 4 տարում գնաց 280 միլիարդ։
Բայց չէ՝ վոր պատերազմն, ինչպես ասացինք, համաշխարհային
յերեկին տնտեսաբանների հաշվով 720 միլիարդ նստեց, ուրեմն
պակասորդ 440 միլիարդը հարկ յեղավ վերցնել պատերազմող
յերկրների հիմնական կարողությունից։ Այսպիսով պատերազմը
վերջանալու մոմենտին նրանում մասնակցողների ազգային կա-
րողությունն արդեն վոչ թե 1.440 միլիարդ վոսկի ուսլի յեր,
այլ 1.000 միլիարդ։

Ե՛լ ալեկի վառ են արտանկարվում պատերազմի հետևնք-
ները, յերը անցնում ենք յուրաքանչյուր մասնակցողի տնտեսա-
կան գրություն քննությունն տառնձին։ Որինալի համար վեր-

ցնենք պարտված Գերմանիան և հաղթած Ֆրանսիան։

Պատերազմի նախորդելին Գերմանիայի ազգային հարստու-
թյունները գնահատվում էին 225 միլիարդ վոսկի մարկ,
իսկ տարեկան ամենարարձը հասույթը 40 միլիարդ մարկ էր։
1921 թվականի միջում Գերմանիայի ազգային կարողությունը
հաշվվում էր ընդամենը մի 100 միլիարդ վոսկի մարկ, իսկ
հասույթը — 16 միլիարդ։ Վերջին տարիների դեպքերը (Ռուրի
բռնագրավումը և այլն) բնականաբար չեն հապատել Գերմանիայի
կարողությունը մեծացնելուն, այլ ընդհակառակն նշանավոր չա-
փով քչացրել են։ Հենց նույն ժամանակ (1921 թ.) Գերմանիայի
պետական պարտքն աճեց հասավ 250 միլիարդ վոսկի մարկի,
2¹/₂ անգամ ալեկի մեծ գումարի, քան Գերմանիայի ազգային
հարստությունն է։ Սրա հետ անհրաժեշտ և դիտել, և դա առանձ-
նապես կարևոր է, վոր այդ պարտքի մեջ չե գաշակիցների
ձեռքով Գերմանիայի վրա դրված 132 միլիարդ մարկ պատե-
րազմական տուգանքը (կոնտրիբուցիա)։ «Յեթև անգլիացիներն
ու ֆրանսիացիները վճռելին այդ գումարն ստանալ անմիջապես և
ամբողջովին, պետք կլինի, վոր, ինչպես ընկ. Տրոցկին և ասել
սրամտորեն, նրանք իրանց գրպանը կոխելին ամբողջ Գերմա-
նիան, եկամտ Ստիննեսի հանքահորերից և վերջացրած հանրապե-
տությունն նախագահ Երերտի կոճակներով»։

Իսկ հիմա նայենք Ֆրանսիային։ Պատերազմի սկզբում
ֆրանսիական պետությունն պարտքը կազմելիս և յեղել մոտավո-
րապես 30 միլիարդ ֆրանկ։ Պատերազմի 5 տարվա մեջ այդ
պարտքը մեծացել հասել է 171 միլիարդ վոսկի ֆրանկի, իսկ
Վերսալյան դաշնագրից հետո, վորն իրր թե պետք է փրկեր
Ֆրանսիային, բուժեր նրա վերքերը, — ֆրանսիական պետու-
թյան պարտքը վոչ միայն չքչացավ, այլ բավական շատացավ։ Ֆրան-
սիացի տնտեսաբան Շ. Ժիդի հաշվներով՝ այդ պարտքն ալեկա-
ցել է էլի 213 միլիարդով։ Այսպիսով մենք տեսնում ենք, թե
ինչպես 8-9 տարվա ընթացքում ֆրանսիական պետական պարտ-
քը 30 միլիարդ ֆրանկից գնում-անցնում է 400-ից գենը, իսկ
1930 թվականին հասնելուց այդ պարտքը մոտավոր հաշվով կհաս-
նի 500 միլիարդ ֆրանկի մի գումարի։ Ֆրանսիայի ազգային յե-
կամուտը՝ պատերազմի կատարած մեծ ալեքածություններին,
աշխատանքի արտադրությունն անկման, մաստանքի աղքատաց-
ման շնորհիվ, ինքնըստինքյան հատկանալի յե վոր նույնպես աչ-
քի ընկնող չափով կրճատվել է։ Այդ կրճատման ամենաճիշտ
չափանիշն է ֆրանկի արժեքի անկումը։

Յեվրոպական մյուս յերկրներում, մինչև իսկ Անգլիայուր

նույնպես բանն այնքան էլ լավ չէ: Այնտեղ էլ են պարտքերը միքանի անգամ ավելացել, իսկ ազգային յեկամուտները բավա-
կանաչափ քչացել: Ծովերի ամենազոր և ամենակարող տիրու-
հու—Անգլիայի տնտեսական թուլացման հատկանիշ կարող է
համարվել նրա պառնուղի արժեքը, վոր սկսել է քիչ-քիչ իջնել
ամերիկական դոլլարի համեմատությամբ: Վերջինսը որինակի
համար վերջին 23 թվականը: 1923 թվի մարտի սկզբում պառնու-
ղը Նյու-Յորկում արժեք 4,7 դոլլար, սեպտեմբերին — 4,54, իսկ
24 թվի հունվարին — 4,28:

Բայց ամենից ավելի ցավագին և սաստիկ են զգում պա-
տերազմի հետևանքները բոլոր պատերազմող և նրանց ոգնող
յերկրների աշխատավոր մասսաները, բանվորներն ու գյուղացի-
ները:

Վորպեսզի պատկերացնենք, թե վորքան և վատացել նրանց
վիճակը պատերազմի հետևանքով և ինչ ծանրություն և ընկել
նրանց ամեն մեկի վրին, կրեքենք ազգարնակչության ամեն մի
հոգու պարտքը մինչև պատերազմը և պատերազմից հետո (հա-
մապատասխան վալյուտայի միավորներով):

**Ազգաբնակչության ամեն մի հոգու պարսփի գումարը մինչև և
պատերազմը յեվ պատերազմից հետո:**

(1919 թ. վերջում, համապատասխան վալյուտայի միավորներով)

	Պատերազմից	
	առաջ	հետո
Միաց. Նահանգներ	11,0	226,3
Մեծ Բրիտանիա	15,6	174,1
Ֆրանսիա	849,5	5.773,4
Իտալիա	440,7	2.137,2
Բելգիա	623,3	2.565,0
Հոլլանդիա	198,3	407,8
Զվիցերիա	454,2	939,6
Ճապոնիա	51,0	61,8

Իհարկե, պատերազմը նյութով և մեծ մասամբ նրանից հըս-
կայական շահ ստացած կապիտալիստները մտքներով անպամ չեն
անցկացրել իրանց վրա վերցնել հետպատերազմյան պարտքերը,
այլ ընդհակառակն, զրանց մեծ մասը նրանք քցում են աշխա-

տավորների, այսինքն բանվորների և գյուղացիների վրին, վո-
րոնք առանց այն էլ քայքայվել են պատերազմից և հետպատե-
րազմյան անգործությունից:

Բայց մեզ կարող են ասել. ճիշտ է, պատերազմը չափազանց
թանգ նստեց, նա չափից դուրս տատանեց պետությունների
տնտեսական հիմքերը, սակայն դրա փոխարեն աշխարհին տվավ
«խաղաղություն», ազատեց նրան հավիտենական պատերազմի-
րի սպառնալիքից և ժողովուրդներին ազատեց բազմամիլիոն
բանակներ պահելուց, վորոնք ահաղին միջոցներ էլին կլանում, և
միմիայն դրա համար արժեք այդ զոհաբերությունն անել: Ահա
մի տախտակ, վորն ամենքին կհամոզի, վոր այդ կողմից ևս
վոչինչ չի փոխվել դեպի լավը, այլ ընդհակառակն, վերին սասի-
ճանի վատացիլ է.

Զեմփի ակ եր գեմվում

Հաղթող յերկրներում	1914 թ. հունվ. 1-ին՝ հոգի	1921 թ. հունվ. 15-ին՝ հոգի
Բրիտանական կայսրութ.	249.000	470.000
Ֆրանսիա	883.560	1.074.500
Իտալիա	250.000	300.000
Միաց. Նահանգներ	200.000	362.000
Բելգիա	61.000	130.000
Յուգոսլավիա	51.000	200.000
Ճապոնիա	250.000	320.000
Զեզոփ յերկրներում		
Շվեդիա	80.000	865.000
Դանեմարք	13.000	110.000
Զվիցերիա	25.000	140.000
Զինաստան	770.000	1.000.000
Պարսված յերկրներում		
Դերմանիա	760.100	200.000
Ավստրո-Հունգարիա	477.800	130.000
Տաճկաստան	300.000	200.000
Բուլղարիա	85.000	20.000

Յերեկի պատերազմից հետո յեկամ բարորությունն ու ան-
վատագությունը շատ կասկածելի յեն, քանի վոր ստիպված են
զրանք պահպանել ավիաների ալգալիսի անտառով: Բայց միայն

ավինները քիչ զարա յեկան, և ցամաքային բանակների հետ միասին ուղարկան, ողային և ստորջրյա նավատորմը նույնպես վոչ միայն չի կրճատվել, այլ ընդհակառակն, անընդհատ ավելա- նում և: Ի հաստատություն բերում ենք հետևյալ ցուցակները.

Ծովային լեռնաքն յեվ պողպատե նավերի արդյունքները:

Ծովային գլխավոր պետ- ություններ 1911 յեվ 21րդ.	Հազար տոնն բուսոն		
	1914 թ. հունիս	1921 թ. հունիս	Տարբերու- թյունը
Մեծ Բրիտանիա	18.877	19.288	+ 411
Բրիտանական գաղութներ	1.407	1.950	+ 543
Միաց. Նահանգներ	1.837	12.314	+ 10.477
Գերմանիա	5.098	654	- 4.444
Ֆրանսիա	1.918	3.046	+ 1.128
Իտալիա	1.428	2.378	+ 950
Ճապոնիա	1.642	3.063	+ 1.421
Հոլլանդիա	1.471	2.207	+ 736
Նորվեգիա	1.923	2.285	+ 362
Ամբողջ աշխարհում	43.921	54.317	+ 11.703

Ողանավասուրմ 1923 թ.

	Թիվը	Խնայարկի ների արդ- յունը (կադ- մը)
Ֆրանսիա	33.500	1.350
Անգլիա	31.000	600
Միաց. Նահանգներ	15.500	600
Իտալիա	6.500	250
Ռումանիա	—	144
Ճապոնիա	3.100	250

Այս տախտակներն ամեն խոսքից ավելի պերճալիտ կերպով են ցույց տալիս, թե վերջին և նստել իմպերիալիստական պատե- րազմը: Յեվ մարդ հիշում է կոմիտեների 3-րդ Համաժողովում ընկ. Տրոցկու ասածը.

«Յեվրոպական հեղափոխության հիմքերի բուլանումը վաղը

ավելի ուժգին կհեծա, քան յեռվացել է յեռեկ յեվ այսու: Պատմության մեծ վորդը փորում է յեվրոպական եկոնոմիկայի ուղղակի հիմքը»:

ԻՄՊԵՐԻԱԼԻՉՄԸ ԿԵՆԴԱՆԻ ՅԵ,—ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Ե ՆՈՐ ՍՊԱՆԴԱՆՈՑ

1914—18 թթ. պատերազմը, վորը բոլոր բուրժուական, սոցիալ-դեմոկրատական և ուղղակի դեմոկրատական զորուներն ու քաղաքական գործիչները «ներկայացրել» են վորպես վերջին պատերազմ, վորից հետո խաղաղություն կհաստատվի յերկրիս յերևին, իրականապես յերևաց, վոր այնքան էլ վերջինը չէ. կա- պիտալիստական իրավարարին պատերազմի հասցրած հարվածը շատ ծանր դուրս յեկալ, բայց վոչ յերեք մահացու: Համաշխար- հային բուրժուազիային և նրա իմպերիալիստական կառավարու- թյուններին աջողից ժամանակին «վերջ տալ» պատերազմին, սկսել բուժել նրա հասցրած վերքերը, գինքը հավաքել և սկսել պատրաստվել... նոր պատերազմի: Համաշխարհային բուրժուա- ղիային այս գործում հիանալի ծառայություն արին նրա համ- ջարդներն իմպերիալիստական պատերազմից — բոլոր յերկրների սոցիալ-դեմոկրատները, զրանց հետ միասին նրանց միջազգային միությունները—Ա Ինտերնացիոնալը և Արճախությունների Ամ- ստերդամյան Ինտերնացիոնալը: Պատերազմը վերջանալուց հետո անցած հնգամյակում վոչ մի պղծություն, վոչ մի ստորություն չմնաց, վոր Հանկյին նրանք հանուն կապիտալիզմի փրկության և նրա տիրապետության պահպանման: Յերը նրանց թվացել է, թե բուրժուազիայի փրկության համար պետք է խեղդել խորհրդ- դային Ռուսաստանը, նրանք այդ արել են ասանց խղճահարվե- լու: Յերը հենց այդ գործի համար հարկավոր յեղալ խեղդածո- անել նոր խորհրդային հանրապետություններ Բալկանյան և Հունգարիային, նրանք Հանրապետություն անել այդ: Յերը բուր- ժուազիան հրամայեց նրանց սպանել իրան խեղդելու իտալական, գերմանական և բուլղարական բանվոր զստակարգի ապստամբու- թյունը, նրանք զրանից էլ չհրամարվեցին՝ «հանձնարարու- թյունը» կատարելով բարեխղճաբար... կապիտալիստական կար- գի փրկության համար իրանց արածի կարեւորության լիակատար գիտակցությամբ, կապիտալիստական կարգի փրկության համար և հետևապես հետագա, 14 թվականի պատերազմից էլ ավելի ահեղի պատերազմների սպանալիքները պահպանելու համար:

Այդ կողմից պետք է խոստովանել, վոր սոցիալ-դեմոկրատիան 14 թվականին համաշխարհային կապիտալիզմի մոտ կամավոր կերպով ծառայութեան մասնելով՝ շարունակում է նրան ծառայել ամենայն հավատարմութեամբ մինչև որս: Այս կողմից ասել է բանը վատ չէ: Բայց բանն այնքան էլ լավ չէ այն մարդկանց բանակում, վորոնց համար կապիտալիստական կարգի պահպանումը առանձնապես կարևոր է և վորոնք նորերս յեղբայր-բարբար միացած սպանեցին Գերմանիան և քերթեցին նրա կաշին, — հենց իմպերիալիստական յերկրներն բանակում: Բանից դուրս է գալիս, վոր կապիտալիստական պետութեաներն միջև յեղած այն միջնադեպերը, վորոնք հասցրին 1914 թ. պատերազմին, վոչ միայն չեն չքացել պատերազմից հետո, այլ ընդհակառակն էլ ավելի յեն սրվել, էլ ավելի սուր կերպով են յերևան յեկել: Յեվ ինչ վոր ամենից բնորոշն է, այդ այն է, վոր սուր միջնադեպերն առաջ են յեկել Վերսալի թալանի յերեկվա սրտակից բարեկամներին — Ֆրանսիայի և Անգլիայի միջև:

«Բուրժուական շատ տնտեսագետներ և քաղաքագետներ, ինչպես որինակ Նիտտին, Կայսն, Լյուդ-Ջորջը, Կեյնսը և ուրիշները, — դուռն են ընկ. Պավլովին իր «Ապագա պատերազմը» հոդվածում, — հարկադրված են ընդունել այն ճշմարտութեանը, վոր ներկայումս ամբողջ աշխարհում իմպերիալիստական մեծ պետութեաներն անտեսական կոնյունկտուրայում և միջադպրային դրութեան մեջ գործում են այնպիսի ֆակտորներ, վորոնք պատերազմ են ծնում, ավելի հզոր ֆակտորներ, քան նրանք, վորոնք առաջ բերին 1914—18 թ.թ. սոսկալի սպանդանոցը: Ներկայումս համաշխարհային պատերազմի համար անհամեմատ շատ ավելի պատճառներ կան, քան թե կային 1814—1918 թ.թ. նախորեկին»:

«Այժմ սուր ընդհարման են յեկել վոչ միայն ճապոնիայի և Ամերիկայի իմպերիալիստական ծրագրերները, այլև Անգլիայի և Ֆրանսիայի, Ֆրանսիայի և Իտալիայի, Ֆրանսիայի և Սպանիայի, Յուգոսլավիայի, և Բուլղարիայի, Յուգոսլավիայի և Չեխո-Սլովակիայի, Ռումանիայի և Հունգարիայի, Լեհաստանի և Լիտվայի կայն կայն, և ահա թե ինչու բավական է մի «ամենապիտիւն տարածայնութեան», մի փոքրիկ կայծ, վոր պետի բռնկվի այն վառվող նյութը, վոր կուտակված է միջադպրային քաղաքականութեան զանազան հանգույցային կետերում — Տանժերում, Սինգափուրում, Ռուրում, Բանատում, Ֆիլիպպյան կղզիներում, Բալկարյան կղզիներում կայն, և պատերազմի հրդեհը պատի ամբողջ աշխարհը»:

Հղիքում գտան հաճ

ձեռքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

Հղիքով լայն ուղիտնումը ուղիտնումը ուղիտնումը

26 3 23

11

24207

